



Ա. ԽԱՆՁՅԱՆ

ԳՐԱՐԱՆԱՅԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,

ԲԵՐՔԱՆԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Յ Ե Վ

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ
ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

338.1(47.925)

Խ-26

ԿՈՒՍՅՐԱՏ

1933 ՅԵՐԵՎԱՆ

07 FEB 2010

հա- ՁԸԱ.
2-12728 a

Պրոխսարանը բոլոր յերկրները, մրացե՛ք

Ա. ԽԱՆՁՅԱՆ

**ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,
ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՅԵՎ**

**ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

(ԸՆԿ. Ա. ԽԱՆՁՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ)

Մրցարկի Ա. Տ. Միջոյան
Հանձնված է արտադրւթյան 21 հունիսի 1933 թ.
Ստորագրված է սպաղբելու 25 հունիսի 1933 թ.
Հրատ. № 117. Տիրած 3000. Գլավիտ 7741 (Բ)
Կուսերանի սպարան. Պատկեր № 4. 97,000 սպ. 60.

**ԿՈՒՏՅՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ**

6 .05. 2013

**ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ընկերներ, Հայաստանի հարվածային կուլտուրասականների այս առաջին համագումարը կայանում է յերկրորդ հնգամյակի առաջին զարնանացանի ավարտումից անմիջապես հետո: Այստեղ հավաքվել են մեր առաջավոր կուլտուրաթյունների լավագույն ներկայացուցիչները, գյուղի սոցիալիստական վերակառուցման փորձված մարտիկները, նրանք, ովքեր քրտնաջան հարվածային աշխատանքով, ջախջախելով դասակարգային թշնամու դիմադրությունը, վերացնելով դժվարություններն ու խոչընդոտները, հաղթանակով ավարտեցին զարնանացանը: Թույլ տվեք, ուրեմն, ամենից առաջ հայտնել ձեզ և ձեր միջոցով Հայաստանի բոլոր հարվածային կուլտուրասականներին ջերմ կոմունիստական վողջույն Հայաստանի կոմունիստական կուսակցության, Հայաստանի բայընիկների Կենտրոնական Կոմիտեյի կողմից: (Բ ու ո ռ ծ ա փ ա հ ա ռ ու թ յ ու Ն ն ե ռ):

**ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԵՁ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ընկերներ, մեր համագումարի առաջին խնդիրն է ամփոփել զարնանացանի արդյունքները Հայաստանում, հաշվի առնել մեր նվաճումներն ու թերությունները զարնանացանի ընթացքում, հաջողությամբ առաջ տանելու համար ցանքերի մշակման գործը, կազմ ու պատրաստ դիմավորելու համար բերքահավաքին: Բայց մեր ամփոփումները թերի կլինեն, յեթե յերկու խոսք չստանք զարնանացանի ընդհանուր արդյունքների մասին Խորհրդային



5576

Միութեան մեջ, վորի անբաժան բաղկացուցիչ մասն է կազմում Սորհրդային Հայաստանը:

Բոլորիդ համար պարզ է հսկայական այն նշանակութիւնը, վոր ունեն աս տարվա գարնանացանը Սորհրդային Միութեան համար: Գարնանացանի ձախողման, գարնանացանի անհաջողութեան վրա եյին դրել իրենց հույսը բանվորների և կոլտնտեսականների բոլոր թշնամիները: Գարնանացանի հաջողութեան մեջ եյինք տեսնում մենք կոլտնտեսութեանների հետագա ամրացման առաջին ցուցանիշը, սոցիալիստական հարձակողականի հետագա ծավալման առաջին պայմաններից մեկը:

Թշնամիների հույսերն իզուր անցան: Սորհրդային Միութեանը հաջողութեամբ ավարտեց յերկրորդ հնգամյակի առաջին գարնանացանը: Յանքի պլանը կատարեցին, նշանակված ժամկետներից ավելի շուտ կատարեցին Սորհրդային Միութեան գրեթե բոլոր շրջանները: Համեմատութեան չանելով անցյալ կամ նախանցյալ տարվա գարնանացանի հետ, պետք է ասենք, վոր այս տարվա գարնանացանի թե՛ քանակական և թե՛ վորակական ցուցանիշները Սորհրդային Միութեան մեջ ավելի բարձր են, քան 1930 թ. գարնանացանինը: Իսկ 1930 թիվը, ինչպես հայտնի յե, ամենաբերքաշատ տարին է յեղել մեր Միութեան պատմութեան մեջ:

Գարնանացանի հաջողութեանը Սորհրդային Միութեան մեջ այս տարի ամենից առաջ ցուցանիշն է կոլտնտեսութեանների ամրացման: Նա ակնհայտ ցույց է տալիս այն խոշոր առավելութեանները, վոր ունեն կոլտնտեսութեանները՝ վորպէս տընտեսութեան կազմակերպման ավելի բարձր ու տնտեսապես նպատակահարմար ձև մանր ու ցիրուցան անհատական տնտեսութեանների համեմատութեամբ, պայմանով, վոր կոլտնտեսականներն աշխատեն բարեխիղճ և ազնվորեն: Գարնանացանի հաջողութեանն արդյունք է այն խոշոր բեկման, վոր առաջ յեկավ կոլտնտեսական գյուղացիութեան գիտակցութեան մեջ, նրա վերաբերմունքի մեջ դեպի կոլտնտեսային աշխատանքը: Գարնանացանի հաջողութեանն արդյունք է այն խոշոր ոժանդակութեան, վոր աշխատավոր գյուղացիութեանը ցույց տվեց Սորհրդային իշխանութեանը արակտորներով, մեքենաներով, պարենով ու սերմացուով: Գարնանացանի հաջողութեանն արդյունքն է մեր կուսակցութեան լենինյան կենտկոմի, մեր կուսակցութեան,

բանվոր դասակարգի և կոլտնտեսական գյուղացիութեան մեծ առաջնորդի՝ ընկ. Ստալինի հմուտ և իմաստուն ղեկավարութեան: (Յ երկարատև ծափահարութեանն էր): Հատկապես զինվելով մէք առաջնորդի պատմական ցուցումներով՝ գյուղական աշխատանքների թերութեանները ու նոր խնդիրների մասին, առաջնորդի ցուցումների համաձայն վերակառուցելով կուլակի դեմ ուղղված պայքարի ֆրոնտը, ջախճախելով կուլակի դիմադրութեանը և սարսուժը, դուրս վանելով կոլտնտեսութեաններից կուլակին ու նրա գործակալներին, կոլտնտեսութեաններում ղեկավար աշխատանքի առաջքաշելով նվիրված ու փորձված ընկերներին, — մեր կուսակցական կազմակերպութեանները և կոլտնտեսութեանները կարողացան ապահովել ցանքի հաջող ավարտումը: Ընկ. Ստալինի նախաձեռնութեամբ կազմակերպված քաղրածիւնները՝ ՄՏԿայաններին և խորհրտնտեսութեաններին կից, հսկայական դեր կատարեցին գարնանացանի հաջողութեան գործում: Ընկ. Ստալինի պատմական ձառը՝ հարվածային կոլտնտեսականների Համամիութենական համագումարում, ստալինյան մեծ լողունգը՝ կարճ ժամանակում բոլոր կոլտնտեսականներին ունենոր, բարեկեցիկ դարձնելու մասին, վոզեւորութեան, աշխատանքային ենտուզիզմի և յեռանդի նոր, հոժեւու ալիք բարձրացրին Սորհրդային Միութեան կոլտնտեսութեանների անծայրածիր դաշտերում: Այսոր, յերբ նշում ենք հարվածային կոլտնտեսականների հերոսական աշխատանքը կոլտնտեսային դաշտերում, մենք պետք է շեշտենք ամենից առաջ Սորհրդային Միութեան առաջին հարվածայինի, յերկրի ինդուստրացման և կոլտնտեսային շարժման հաղթանակների մեծագույն կազմակերպչի, Սորհրդային Միութեան հմուտ ու խիզախ նավավարի, ընկ. Ստալինի խոշորագույն ծառայութեանը և պատմական դերը: (Բ ու ը ն, յ երկարատև ծափահարութեանն էր):

Անցնենք, ընկերներ, գարնանացանի արդյունքներին Հայաստանում: Այդ արդյունքներն ուսանելի, հետաքրքիր շատ բան ունեն, նրանց մասին պետք է մտածեն մեր կոլտնտեսական և մենատնտես գյուղացիները: Գարնանացանն այս տարի Հայաստանում անցկացավ կլիմայական անբարենպաստ պայմաններում: Ստատշունչ, սովորականից մոտ մի ամսով ավելի յերկարած ձմեռը սաստիկ կրճատեց դաշտային աշխատանքների ժամկետները, և ավելի բարդացրեց այն գժվարութեանները, վոր առանց այն

ել ունեցինք անցյալ տարվա յերաշտի և շրջաններում կատարված սխալներին, վատ աշխատանքի հետևանքով: Բայց չնայած դժվարութիւններին, ղեկավարվելով ընկ. Ստալինի ցուցումներով, կուսակցական կազմակերպութիւններին ղեկավարութեամբ լարելով բոլոր ուժերը և կտրելով կուլակային դիմադրութիւնը՝ Հայաստանի կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները կատարեցին գարնանացանի պլանը անցյալ տարվա համեմատութեամբ ավելի բարձր ցուցանիշներով:

Այն ժամանակ, յերբ մինչև այս տարվա մայիսի մեկը ցանված եր անցյալ տարվա համեմատութեամբ յերկու անգամ ավելի քիչ, մայիսի ընթացքում մենք զգալիորեն առաջ անցանք 1932 թ. գարնանը մինչև հունիսի 10-ը Հայաստանում ցանված եր 307.000 հեկտար հող, իսկ այս տարի առ 10-ը հունիսի ցանք ե կատարված 322.000 հեկտար, վոր կազմում ե գարնանացանի պլանի 99 տոկոսը: Գրեթե բոլոր մշակույթների քանակական ցուցանիշներն այս տարի ավելի բարձր են անցյալ տարվա համեմատութեամբ: Բարձր են նաև վորակական ցուցանիշները անցյալ տարվա 199.000 ցենտների փոխարեն այս տարի դուրս բերեց 273.000 ցենտներ հացահատիկային սերմացու. անցյալ տարվա 88.000 ցենտներին փոխարեն ախտահանված ե 231.000 ցենտներ, դաշտ ե փոխադրված 131.000 տոնն պարարտանյութ: Ավելի զգալի յե դառնում այս տարվա հաջողութիւնը, յեթե համեմատենք այս տարվա գարնանացանի և նախորդ աշնանացանի ընդհանուր տարածութիւնը—425.000 հեկտար առ 10-ը հունիսի— անցյալ տարվա գարնանացանի և համապատասխան աշնանացանի հետ, վոր կազմում ե 384.000 հեկտար, մինչև նույն թիվը: Ուրեմն այս տարի 41.000 հեկտար ավելի ցանք ունենք, անցյալ տարվա համեմատութեամբ: Սա, իհարկե, խոշոր հաջողութիւն ե և այդ հաջողութիւնն ամենից առաջ բաժին ե ընկնում մեր գյուղատնտեսութեան կոլտնտեսային սեկտորին, վորը վոչ միայն կատարեց, այլև գերակատարեց իր պլանները, այն ժամանակ, յերբ մի շարք շրջաններում այլևայլ մշակույթների դժով մենատնտեսները վորոշ թերակատարում ունեցան: Այդ թերակատարումը մանավանդ աչքի յե ընկնում բամբակացան շրջաններում և Բայազետի, Մարտունու և Ապարանի շրջաններում, մի հանգամանք, վոր պահանջ ե դնում այդ շրջաններին կոլտնտեսականներին, մենատնտեսներին և կուսկազմակերպութիւններին առաջ

հատուկ ձեռնարկումներով ե մանավանդ մշակման և բերքահավաքի որինսակելի կազմակերպմամբ վերացնել անթուլատրելի հետամնացութիւնը:

Այժմ, ընկերներ, մտաբերեք, թե նախքան խորհրդային կարգերը, նախքան կոլտնտեսային կարգերը, մեր գյուղացու համար, չքավոր ու միջակ գյուղացու համար ի՞նչ պայմաններում եր անցնում գարնանացանը՝ մանավանդ կլիմայական անբարենպաստ պայմաններում. չքավոր գյուղացիները և միջակ գյուղացիներին մի խոշոր մասը զրկվում եր ցանք անելու հնարավորութիւնից՝ սերմացու, քաշող ուժ ու կեր չունենալու պատճառով: Չքավոր գյուղացին և միջակը վարձվում եյին կուլակներին և ունեւորներին մոտ ստրկական պայմաններով, կուլակները գրավում եյին չքավորին հողը. վաշխատուական պայմաններով տալիս եյին մի քիչ սերմացու՝ բերքի մեծագույն մասը խլելու նպատակով: Բավական եր անհաջող մի գարուն, վորպեսզի ել ավելի ամբացնեյին իրենց ծանր լուծը չքավոր, աշխատավոր գյուղացու վզին գուղի ցեցերն ու կուլակները, վորպեսզի կործանվեյին, մնանկանային հարյուրավոր, հազարավոր աշխատավոր տնտեսութիւններ: Մեր գյուղացիներին հիշողութեան մեջ դեռ թարմ ե այն դժոխքի, անասնական հարստահարման այն պատկերը, վոր ուներ գյուղը կապիտալիստական կարգերում: Վերցրեք այս տարվա պատկերը: Ծնորհիվ այն հանգամանքի, վոր Հայաստանի գրեթե վորոշ շրջանները և միջակ գյուղացիներին մեծ մասը կազմակերպված են կոլտնտեսութիւններում՝ նրանք վոչ միայն չկործանվեցին, այլ հաջողութեամբ ավարտեցին ցանքը, չնայած դժվարին պայմաններին. պետութիւնը խոշոր պարենային և սերմացուի ու ժանդակութիւն ցույց տվեց կարիքավոր շրջաններին: Այդ շրջաններն ստացան 350.000 փութ հաց: Միայն այս գարնանը բամբակացան շրջաններն ստացան 50-ից ավելի նոր տրակտորներ. կազմակերպվեց Աշտարակի շրջանում նոր ՄՏԿայան: Կոլտնտեսութիւններն ստացան մեծ քանակութեամբ գյուղատնտեսական մեքենաներ և վարկ՝ լիկաններ գնելու, շինարարութիւն կատարելու համար: Կարճ ասած, հենց միայն այս գարնանացանի վորձը բավական ե ցույց տալու համար մեր բոլոր աշխատավոր գյուղացիներին, վոր կոլտնտեսութիւններին ճանապարհը միակ ճանապարհն ե, վոր ազատում ե նրան կարիքից, հին գյուղի խավարից, չքավորութիւնից, շահագործումից, վոր բաց ե ա-

նում նրա առաջ նոր յերջանիկ կյանքի ճանապարհը: (Մ ա փ ա հ ա Ր Ո Ւ Թ յ Ո Ւ Ն Ն Ե Ր):

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ ՉԱՂԹԱՆԱԿԵՑԻՆ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ

Ընկերներ, այսպիսով տեսնում ենք, վոր այս տարվա գարնանացանը յեկավ հաստատելու Խորհրդային Միության մեջ կողմնադրության կարգերի վերջնական և վճռական հաղթանակը: Վճռական շրջաններում, դուք այդ գիտեք, կոլեկտիվացումը հիմնականում ավարտված ե: Հայաստանում մենք կողմնասուլթյուններում միացրել ենք առայժմ մեր գյուղական տնտեսությունների 38 տոկոսը, բայց այստեղ նմանապես կասկածից դուրս ե կողմնասուլթյուն կարգերի վճռական հաղթանակը: Կողմնասուլթյունների հաղթանակը, սակայն, Խորհրդային Միության մեջ մի որում և մի տարում չստեղծվեց: Արժի, վոր այսոր ընդհանուր գծերով հիշենք այն ուղին, վորով անցավ մեր յերկիրը մինչև կոլտնտեսությունների հաղթանակի ապահովումը: Վառ գույներով և բուրբ կոլտնտեսականներին հասկանալի լեզվով այդ ուղին նկարագրեցին հարվածային կողմնասուլթյունների համամիութենական համագումարում մեր առաջնորդ ընկ: Մ ա ա լ ի ն ը, նրա լավագույն գործակիցը՝ Համկոմկուսի Կենտկոմի քարտուղար և գյուղատնտեսական բաժնի վարիչ ընկ: Կ ա գ ա ն ո վ ի չ ը:

Սկսած հին ժամանակներից, յերբ առաջ են յեկել դասակարգերը և սկսվել ե դասակարգային շահագործումը, մարդկության լավագույն գավակները մտածել են այն մասին, թե ի՞նչպես անել, ի՞նչպիսի կարգեր հաստատատել, վոր այս աշխարհում չլինեն ստրուկներ և տերեր, ճորտեր և կալվածատերեր, շահագործողներ և շահագործվողներ: Դարերի և տասնյակ դարերի ընթացքում պայքարել են դասակարգերը, առաջ են յեկել հեղափոխություններ, ընկել են աշխատավորների շահերի պաշտպանություն նվիրված հազարավոր մարտիկներ, բայց վոչ վոքի չի հաջողվել հաստատել այնպիսի կարգեր, ուր չլիներ մարդու շահագործումը մարդու միջոցով: Փոխվում եյին տերերը, մեկ իշխող դասակարգին փոխարինում եր մյուսը, փոխվում եյին շահագործման ձևերը, բայց շահագործումը մնում եր: Միայն մեր յերկրում, Խորհրդային Միության մեջ, Հոկտեմբերյան հեղափոխություն հաղթանակից հետո հնարավորություն ստեղծվեց գործնականորեն վճռել

մարդկության առաջ ծառայած ամենախոշոր խնդիրը: «Միայն մեր Խորհրդային հեղափոխությունը, միմիայն մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը հարցը դրեց այնպես, վոր վոչ թե մի տեսակ շահագործողները փոխարինվեն այլ տեսակ շահագործողներով, վոչ թե շահագործման մի ձևը փոխարինվի մի այլ ձևով, այլ արմատախիլ արվեն բոլոր շահագործողները, բոլոր հարուստները, կեղեքիչները՝ թե հները, թե նորերը» (Մ ա ա լ ի ն):

Հոկտեմբերյան հեղափոխությունը, վոր կատարեցին բայլելվիկները, մարդկության պատմության մեջ ամենամեծ մարտիկի և ղեկավարի, աշխատավոր մարդկության ամենամեծ ու լավագույն գավակի՝ Լենինի ղեկավարությամբ, նոր ել բացեց մարդկության պատմության մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունը յերկու պայքարող բանակի վերածեց մեր յերկրագունդը. մի կողմը՝ բանվորները, աշխատավոր գյուղացիները, իմպերիալիստների կողմից հարստահարվող ժողովուրդները, վորոնք պայքարում են նոր աշխարհի համար՝ մարդկության համար յերջանիկ կյանք ստեղծելու համար՝ ամբողջ աշխարհում, մյուս կողմը՝ հին աշխարհի կողմնակիցները, կապիտալիստները, կաթածատերերը, կուլակները, հարուստները, ուրիշ աշխատանքով ապրողները և նրանց վարձկաններն ու գործակալները, վորոնք ուզում են ամուր պահել հին կարգերը, շարունակել աշխատավոր մարդկության շահագործումը՝ հարուստների, կապիտալիստների ոգտին: Ի՞նչուր չեք, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո հին աշխարհի բոլոր ուժերը, բոլոր բուրժուական պետությունները միացած՝ սրբազան պատերազմ սկսեցին բանվորների և աշխատավոր գյուղացիների առաջին մեծ պետություն վորների և աշխատավոր գյուղացիների հետ թույլ եյինք և անփորձ, բանվորները նոր-նոր եյին սկսել յերկիր կառավարել սովորել, բայց քաղաքացիական անախաբնթաց պատերազմներից մենք դուրս յեկանք հաղթանակով, վորովհետեւ բայլելիկները Լենինի ղեկավարությամբ կարողացան հաստատել բանվորների և աշխատավոր գյուղացիների անխղի ձևերը դաշինք, վորովհետեւ մենք հաստատեցինք ամուր, յերկաթյա կարգապահություն, վորովհետեւ մենք ստեղծեցինք և ամրացրինք աշխատավոր մարդկության ապավինն ու պարծանքը՝ Կարմիր բանակը, վորովհետեւ մեր կողմն եր ամբողջ աշխարհի բանվորների և աշխատավորների համակրանքն ու ոգնությունը:

Թշնամին ուժեղ էր, փորձված, հարուստ, բայց մենք հաղթեցինք նրան և ստեղծելով համեմատաբար խաղաղ պայմաններ սոցիալիզմի կառուցման համար, աշխատանքի անցանք բուժելու պատերազմից մնացած վերքերը, վերակահանգները համար քայքայված տնտեսությունը, ուժեր և միջոցներ կուտակելու՝ ավելի լայն հարձակում սկսելու համար:

Առաջին շրջանում՝ մինչև 1924 թ. մեր նավի ղեկը վարում էր մարդկություն մեծագույն հանճարը՝ Լենինը, նրա մահից հետո՝ նրա հավատարիմ գործակիցն ու մեծագույն աշակերտը, Լենինի արժանավոր հաջորդը՝ Ընկ. Ստալինը: Ստալինի ղեկավարությամբ Խորհրդային Միությունը փայլուն հաջողությամբ ավարտեց սոցիալիզմի կառուցման առաջին հնգամյակը, վոր մեր յերկրում սոցիալիզմի կառուցման ամենամեծ և վճռական գործն էր: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն է ր):

Ընկերներ, բայց Լենինի կենսական հունվարյան պլենումից հետո, Ընկ. Ստալինի պատմական ղեկուցումից հետո բոլորը գիտեն առաջին հնգամյակի կատարման արդյունքները: Առաջին հնգամյակը վերածեց մեր հետաճաց գյուղացիական յերկիրը առաջավոր արդյունաբերական զարգացած յերկրի: Առաջին հնգամյակն ազատեց մեզ ոտար, թշնամի յերկրների կախումից: Առաջին հնգամյակը կատարելուց հետո մենք կարող ենք մեր յերկրում, մեր գործարաններում մեր ուժերով կառուցել և արտադրել այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է մեզ: Առաջին հնգամյակն էլ ավելի բարձրացրեց մեր Կարմիր բանակի անպարտելի հզորությունը: Առաջին հնգամյակը կատարելով՝ մենք այժմ արտադրում ենք մեր խորհրդային գործարաններում տրակտորներ, կոմբայներ, տանկեր, ավտոներ, զրահապատներ, ամենաբարդ զազայահներ և գործիքներ, այրուպլաններ, մոտոռներ, տուրբիններ, ամեն ինչ, վոր անհրաժեշտ է մեր տնտեսության զարգացման, մեր յերկիրն իմպերիալիստական գեղատիչներից պաշտպանելու համար: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն է ր):

Առաջին հնգամյակի կատարման կարևորագույն արդյունքը կազմում է նաև կուլեկտիվացման հաղթանակը մեր յերկրում: Սոցիալիզմի հաղթանակը, Ընկերներ, չնայած ինդուստրացման վճռական հաջողություններին, կատարյալ չէր լինի, յեթե մենք շարունակեցինք գյուղում հենվել մանր ու ցիրուցան անհատական տնտեսությունների վրա: Մանր անհատական տնտեսու-

թյունները չէին կարող սոցիալիզմի, նոր կյանքի հիմքը ծառայել գյուղում: Գյուղատնտեսությունը հետ էր մնում արդյունաբերություն զարգացումից. գյուղատնտեսության արագատեղ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ էր այն վերագինել նոր տեխնիկայով, արդիական գործիքներով, տրակտորներով: Իսկ տրակտորը մանր տնտեսություն չի սիրում, փոքր հողամասերի սահմանները չի սիրում: Տրակտորը, կոմբայնը պահանջում են լայն հողամասեր, խոշոր կազմակերպված տնտեսություններ: Ահա այդ պատճառով հենված յերկրի ինդուստրացման հաջողությունների վրա, այն ժամանակ, յերբ արդեն հնարավոր էր սեփական արդյունաբերության վրա հենված վերագինել մեր գյուղատնտեսության տեխնիկան, բայց Լենինների կուսակցությունն Ընկ. Ստալինի ղեկավարությամբ առաջ մղեց մեր գյուղի կուլեկտիվացման մեծ գործը: Մեր մեծ ուսուցիչներ՝ Մարքսը, Ենգելսը, Լենինն իրենց հանճարեղ մտքի գործությամբ Մարքսը, Ենգելսը, Լենինն իրական ուղին: Բայց գործնականում հնարավորություն յեղավ ինդրի մասսայական իրական լուծմանը գիմել միայն 1929 թվին: Յեվ 1929 թվի սեպտեմբերից սկսվում է մեծ բեկումը, կուլեկտիվացման բուռն վերելքը: Անցավ յերեք տարի, և այժմ, ինչպես Ընկ. Կազանովիչն էր շեշտում, մենք ամուր և անսասան կանգնած ենք արդեն մեր խորհրդային կոլտնտեսային հողի վրա:

Ընկերներ, կուլեկտիվացման ծավալումն ու հաղթանակը միաժամանակ աշխատավոր գյուղացիների դարավոր արյունաբերությունների՝ կուլակների անկումն է: Կոլտնտեսական-մասսայական շարժման վրա հենված՝ մեր կուսակցությունն առաջ մղեց կուլակության՝ վորպես դասակարգի վերացման քաղաքականությունը: Կոլտնտեսություն մտած աշխատավոր մասսաները սեփական ձեռներով ձեռնարկեցին կապիտալիզմի վերջին, ամենամասսայական արմատների տեղահանմանը, վոչնչացմանը: Կուլակըն ու կոլտնտեսությունն իրար կողքի չէին կարող շարունակել իրենց գոյությունը, վորովհետև կոլտնտեսության նպատակն է վերացնել դասակարգային շահադրժուց գյուղում, մինչդեռ կուլակն իր կյանքը և բարորությունը հիմնում է չքավորին և բատրակին շահագործելու վրա: Կուլակն ամեն միջոցով դիմադրում էր կոլտնտեսությունների կազմակերպմանն ու ամրացմանը, նրա

բոլոր դաշնակիցները և գործակալները վոտի յեւան ամեն միջոցով փրկելու համար կուլակին: Վնասարարները, ինտերվենտները, բուրժուական յերկրների վարձկանները, մենշեիկները, դաշնակները, հակահեղափոխական ինտելիգենտները, նախկին մարդիկ— այս յերեք տարի վոչ մի միջոց կամ ջանք չխնայեցին խափանելու համար կոլտնտեսությունները, փրկելու համար կուլակին: Կուսակցութեան շարքերում նույնիսկ գտնվեցին անկայուն տարրեր և կազմալուծված մարդիկ, վորոնք պատմական այս պայքարում յենթարկվելով կուլակային ճնշմանը, տատանվեցին կամ անցան թշնամու կողմը, բարեկազմներից այն կողմը: Բայց կոլտնտեսությունները հաղթանակեցին, կուլակությունը ջարդ ու փշուր յեղավ և այժմ վոչնչանում է վերջնականապէս: Կուսակցությունը դեն շարտեց աջ ուղիւնիստներին և «ձախ» քյալլագոյներին՝ կուլակային ազենտներին և Ս տ ա լ ի ն ի անսասան ղեկավարութեամբ ապահովեց սոցիալիզմի հաղթանակը գյուղում:

Կոլեկտիվացումն, ընկերներ, ընդգրկում եր վոչ թե հազարներ կամ միլիոններ, այլ տասնյակ միլիոններ: Տասնյակ միլիոններ շեղվեցին հին, պապենական ճանապարհից դեպի նոր ճանապարհ՝ սոցիալիզմի ճանապարհը:

Ինչ խոսք, վոր կոլեկտիվացման ընթացքում դասակարգային պայքարի սրված պայմաններում տեղերում յեղան խոտորումներ, սխալներ, չափազանցություններ: Պատմութեան մեջ նմանը չունեցող, նախընթացը չունեցող գործի յենք ձեռնարկել մենք: Սխալներ յեղան, ընկերներ, նաև մեզ մոտ՝ Հայաստանում: Յեկ կրկին ընկեր Ստալինն եր, վոր ժամանակին ու հմտորեն ուղղեց սխալները, լուսավորեց կոլեկտիվացման լենինյան ուղիները, այդպիսով իսկ ապահովելով սոցիալիզմի հաղթանակը գյուղում:

Ընկերներ, ընկեր Ստալինն իր հայտնի ճառում պարզ ցույց տվեց, թե ինչ տվին աշխատավոր գյուղացիներին մեր կոլտնտեսություններն իրենց գոյութեան առաջին շրջանում: Կոլտնտեսությունները փրկեցին առնվազն 20 միլիոն չքավորներ աղքատությունից, քայքայումից, փրկեցին կուլակային ստրկությունից, դարձրին նրանց ապահով մարդիկ: Մեծ նվաճում է այս, բայց միայն առաջին քայլն է: Ընկեր Ստալինը հայտարարեց, վոր «մենք պետք է անենք յերկրորդ քայլը, մենք պետք է ձեռք բերենք նոր նվաճում. մենք պետք է բարձրացնենք

կոլտնտեսականներին, այդ նախկին չքավորներին, նախկին միջակներին ավելի բարձր աստիճանի: Այդ քայլն է՝ ունեւոր դարձնել բոլոր կոլտնտեսականներին»:

Ունեւոր դարձնել բոլոր կոլտնտեսականներին— ահա, ընկերներ, մեր մոռավոր խնդիրը, ահա պատմութեան ամենահսկա խնդիրներից մեկը: Մենք պետք է վճենք և կվճենք այդ խնդիրը: Բայց ղեկիկների, նրանց պողպատե առաջնորդի խոսքը յերեք իր գուր չի անցել և չի անցնի: Մեր կոլտնտեսություններն ունեն բոլոր պայմանները միքանի տարվա ընթացքում մինչև վերջ վճելու համար առաջադրված խնդիրը. նրանց ձեռքումն են գտնվում լավագույն հողերը, նրանց ձեռքումն են գտնվում մեքենաներն ու տրակտորները, վորոնք գնալով ավելի ու ավելի կշատանան մեր կոլտնտեսային դաշտերում, նրանք ունեն խորհրդային իշխանությունը, «վորը գործով ապացուցեց, վոր ինքը պատրաստ է և ընդունակ է սխտեմատիկ և յերկարատե արտադրական ոգնություն ցույց տալ գյուղացիութեան աշխատավոր մասսաներին» (Ս տ ա լ ի ն):

Կոլտնտեսականներից պահանջվում է մեկ բան — «աշխատել ազնվորեն, բաշխել կոլտնտեսութեան յեկամուտներն ըստ աշխատանքի, խնամքով պահպանել կոլտնտեսային գույքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, լավ խնամել ձին, կատարել բանվորագյուղացիական պետութեան առաջադրանքները, ամրացնել կոլտնտեսությունները և դուրս վոնդել կոլտնտեսություններից այնտեղ խցկված կուլակներին և յենթակուլակներին»: ահա ստալինյան պահանջը: Այս գարնանացանի ընթացքում կոլտնտեսականների մեծ մասն իր աշխատանքով ցույց տվեց, վոր նա գնում է ընկ. Ստալինի նշած ճանապարհով: Կոլտնտեսականն այս գարնանը պայքարում եր աշխատանքի համար, պայքարում եր աշխոր ստանալու և կուտակելու համար, կոլտնտեսականների մեջ արմատանում է զզվանք և արհամարհանք դեպի ծուլը, լողը, անգյալը, առաջ է գալիս աշխատող, քրքտինք թափող, կոլտնտեսական դաշտերում իրապէս հերոսական աշխատանք կատարող կոլտնտեսական նոր տիպը: (Մ ա փ եր): Այս է ամենակարեւորը, ամենաեյականը: Գիտակցական վերաբերմունք դեպի կոլտնտեսային աշխատանքը, այն, վոր կոլտնտեսականները փոխանակ առաջվա նման ասելու՝ սա իմն է, իսկ սա կոլտնտեսականինը, սկսում են ասել՝ սա իմն է— կոլտնտեսակա-

նինը—ցույց է տալիս, վոր արագ թափով առաջ է գնում մեր կոլտնտեսականները, յերեկվա այդ մանր սեփականատերերի սոցիալիստական վերափոխման գործը: Այս տարվա զարնանացանն այդ ուղղութիւնով մեծ բեկման սկիզբն էր, բայց միայն սկիզբը: Չպետք է տարվել ու հանգստանալ նախնական հաջողութիւններով, պետք է ամրացնել և ծավալել զբաղված դիրքերը: Գարնանացանն ավարտվեց հաջողութեամբ, բայց ցանքը գործի կեսն է, կեսից ել պակասը: Կոլտնտեսութիւնների բայլը շեղեցման, կոլտնտեսութիւնների իրական ամրացման ավելի կարևոր քննութիւնն սկսվում է այժմ, այդ քննութիւնը ցանքի մշակումն է և բերքահավաքը: Լավ կատարված ցանքը դեռ չի յերաշխափորում բարձր բերք. ավելի շատ բան է կախված մշակումից և բերքհավաքից: Հին առածը՝ «ինչ վոր ցանես՝ այն կհնձես»—լուրջ լրացման կարիք ունի մեր պայմաններում պետք է ասել—«ինչ և ինչպես կցանես, ինչպես կմշակես, ինչպես կհավաքես՝ այն ել կստանաս»: Բերքի մշակումը, բերքահավաքի պատրաստումը և կազմակերպումը—անա այսօրվա մարտական խնդիրը, անա կոլտնտեսութիւնների ամրացման ավելի կարևոր ցուցանիշը: Այդ խնդրի լուծմանը պետք է մարտականորեն լծվեն մեր բոլոր կոլտնտեսութիւններն ու կոլտնտեսականները:

ԲԵՐՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԲԵՐՔԱՆԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԼԻՈՎԻՆ ԿԱՏԱՐԵԼ ԲԱՄԲԱԿԻ ՊԼԱՆԸ

Ընկերներ, խոսելով բերքի մշակման և բերքահավաքի կազմակերպման մասին՝ առաջին խոսքը պետք է ուղղենք բամբակացան շրջանների կոլտնտեսականներին և նրանց հարվածային ներկայացուցիչներին. անա յերկու տարի յե, վոր բամբակացան շրջանների կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները թերակատարում են իրենց պարտավորութիւնները բանվորագյուղացիական պետութեան հանդեպ. այս ամօթի սև բիծն արատավորում է վոչ միայն իրենց՝ բամբակացաններին, այլև Հայաստանի մյուս կոլտնտեսութիւններին: Բանվորագյուղացիա-

կան պետութիւնը տալիս է բամբակացաններին հաց, վարկավորում է նրանց, տալիս է արդուականաբերական ապրանք ավելի շատ՝ քան մյուս շրջաններին, տալիս է տրակտորներ, սերմ,—բայց բամբակացանները խայտառակ կերպով թերակատարում են իրենց պլանները: Ինչո՞ւ է բանը: Վորտեղ պետք է փնտռել այս խայտառակութեան պատճառը: Միայն և միմիայն մեր վատ աշխատանքի, կոլտնտեսականի վատ աշխատանքի մեջ: Վորովհետև բամբակացան բոլոր շրջաններն ունեն լավ հող, առատ ջուր և տաք արև բամբակի մշակման համար: Թերի մուռ է բամբակի մշակումը, այն, ինչ վոր ամբողջապես կոլտնտեսականի անձնական աշխատանքից, ազնվութիւնից և բարեխղճութիւնից է կախված: Խոսենք փաստերով:

Վերցնենք Դամարուի շրջանի Ուլուխանլու գյուղի կոլտնտեսութիւնը. կազմակերպված է 1927 թ., հին կոլտնտեսութիւն է՝ 264 տնտեսութիւնից, ունի մոտ 500 հեկտար բամբակի համար հիանալի հարուստ սեահող: Անցյալ տարի մթերման պլանը չի կատարել—1380 ցենտների փոխարեն տվել է 500 ցենտներ, բայց ցորեն ստացել է 850 ցենտներ ավելի, քան թե հասնում է տված բամբակի փոխարեն: Բամբակի բերքատվութիւնն այս կոլտնտեսութեան մեջ յեղել է 1930 թ. 4 ցենտներ, 1931 թ.՝ 3 ցենտներ, 1932 թ.՝ 1 ու կես ցենտներ՝ մեկ հեկտարից: Ինչն է պատճառը: Իրենց կոլտնտեսականների իսկ խոստովանութեամբ կոլտնտեսային աշխատավոր ձեռները կեսն անգամ աշխատանքի չէր դուրս գալիս, աշխատանքի դուրս յեկողներն էլ աշխատում էյին որական 3—4 ժամ. աշխատանքի էյին դուրս գալիս ժամը 9—10-ին: Հենց վոր գնացքը մեկնում էր դեպի Դամարու, մոտա-վորապես ժամը 1-ին կամ 2-ին, բոլորը վերադառնում էյին տուն: 1932 թ. կոլտնտեսականները վերաբերվում էյին կոլտնտեսային գույքին վորպես ոտարի կամ թշնամու գույքի. շղթաները, թոկերը, շարքացանները, կուլտիվատորներն անխնա ջարդվում էյին. մոտ 2000 ո. մանր գործիքներ և գյուղատնտեսական մեքենաներ անհետ կորել էյին, խայտառակ դիմադրելութեան պատճառով հնարավոր չի պարզել, թե ո՞վ է պատասխանատուն, ո՞վ է մեղավորը: Մինչև այժմ էլ կոլտնտեսութեան արտերում և փոսերում գտնում են անցյալ տարվանից մոռացված մեքենաներ և մեքենայի մասեր: 1932 թ. կոլտնտեսականները ծեծելով կուրացնում, սատկացնում էյին անասուններին, և մեղավորները չե-

յին գտնվում, վորովհետև չկար տեր ու տիրակա՛ն, ով շուտ հաս-
նում էր, նա յեւ լծում ու քշում էր ձին կամ յեզը: Մարտի
26-ի վորոշման հիման վրա կոլտնտեսութ՛յունը սովել էր իր ան-
դամներին 5 գոմեշի ձագ, վորից 4-ն անմիջապես ծախել ու կերել են:
Կոլտնտեսութ՛յունն այժմ 15000 ժամկետանց պարտք ունի: Կոլ-
տնտեսութ՛յունն ունի 23 մատակ, այժմ մնացել է միայն 2 մա-
տակ՝ և 3 կով: Ստան անխնա գողանում են: Ահա ձեզ Ուլուխանլուի
կոլտնտեսութ՛յան պատկերը. կասկած չկա, վոր այս կոլտնտեսու-
թ՛յունը կոլակային կոլտնտեսութ՛յուն է յեղել. այս կոլտնտեսու-
թ՛յան մեջ չկա, չի զգացվում բայլելիկյան ձեռք, բայլելիկյան
դեկավարութ՛յուն: Բամբակի պլանի ձախողման միակ պատճառը
վատ աշխատանքն է: Իժբախտաբար պետք է հայտնեմ, վոր ներ-
կայումս էլ, 1933 թ. Ուլուխանլուի կոլտնտեսութ՛յունն անցյալ
տարվա խայտառակ դրութ՛յունից շատ առաջ չի գնացել, համենայն
դեպս աշխատանքի կարգապահութ՛յունը և արտադրողականու-
թ՛յունը դեռ շատ անբավարար է կոլտնտեսութ՛յունում: Ո՞վ է լի-
նելու մեղավոր, յեթե այս տարի Ուլուխանլուի կոլտնտեսական-
ները բամբակի վատ բերք ստանալով կարիքի մեջ մնան, հաց
պահաս ունենան: Իսկ մենք այս տարի վոչ վոքի վոչ մի պայ-
մանով վոչ մի կիլո ավել հաց չենք տալու—ով աշխատում է, ով
լրիվ կատարում է պլանները, նա յեւ կստանա: (Ծ ա վ ե թ):

**Հիմա համեմատենք Ուլուխանլուի հետ Շիրքուլ գյուղի կոլտն-
տեսութ՛յունը,** նա Ուլուխանլուի հարևանն է, նա գտնվում է
հովասար հողային, ջրային և կլիմայական պայմաններում Ուլու-
խանլուի տնտեսութ՛յան հետ: Բայց սար ու ձորի տարբերութ՛յուն
կա այս յերկու կոլտնտեսութ՛յունների միջև: Շիրքուլի կոլտն-
տեսութ՛յունը կազմակերպված է 1929 թ., ունի 99 տնտեսու-
թ՛յուն, վորից 39-ն ընդունվել են այս տարի: Կոլտնտեսու-
թ՛յունը մայիսի 5-ին ավարտել է 97 հեկտար բամբակի
ցանքը: Հունիսի 5-ին ավարտել է առաջին քաղհանը. չբա-
վականանալով իր հողերով, հարևան Իոնդուզիան գյուղից ստա-
ցել է 30 հեկտար ճահճային հող՝ չալթուկ ցանելու: Կատարում
և գերակատարում է բամբակի պլանները. 1931 թ. 420 ցենտ-
ներ բամբակի փոխարեն հանձնել է 575 ցենտներ, 1932 թ. 873
ցենտների փոխարեն հանձնել է 1100 ցենտ: 1930 թ. կոլտնտե-
սութ՛յունը ձի և յեզ չուներ, այժմ սեփական միջոցներով ձեռք է
բերել 6 ձի, 10 յեզ և գոմեշ: Քաշող ուժը գտնվում է լավ դրու-

թյան մեջ: Բրեգադները կազմակերպված են ձիշտ. կայուն կազմ
ուներն, հոսունութ՛յուն չկա: Կիրառվում է անհատական և մանր
ողակային գործավարձ: Կոլտնտեսականներն իրենք շարունակ
աշխատանք են պահանջում բրեգադիներերից: Աշխուրի արժեքը
տարեց-տարի ավելացել է: Լավ աշխատանքի պատճառով կոլ-
տնտեսականները բարեկեցիկ կյանք են վարում, ունևոր են
դառնում: Որինակ՝ Շուքուր Հասանովը չքավոր գյուղացի յեր,
ընտանիքը բաղկացած է 4 շնչից, աշխատում էր սրահ-նրա հա-
մար. 1929 թ. մտել է կոլտնտեսութ՛յուն. 1932 թ. հարվածային
է, բրեգադի է նշանակված, ունի 340 աշխուր, իր աշխուրերի դի-
մաց ստացել է 1408 կիլո ցորեն, 207 կիլո չալթուկ, 1200 կիլո
ձմերուկ և 283 խուրձ յոնջա. 1933 թ. գնել է մեկ կով, 83 կիլո
ջաքար:

Մամադ Ալիյովի ընտանիքը բաղկացած է 5 շնչից. 1931 թ.
մտել է կոլտնտեսութ՛յուն. 1932 թ. ստացել է իր 356 աշխուրի
դիմաց՝ ցորեն 1778 կիլո, չալթուկ 245,5 կիլո, յոնջա 290 խուրձ,
գնել է 5 փութ ու կես շաքար:

Ջեյնալ Հյուսեյին Ողլու ընտանիքը բաղկացած է 3 շնչից,
ուներ 215 աշխուր, ցորեն է ստացել 1126 կիլո, չալթուկ 149 կիլո,
յոնջա 202 խուրձ, գնել է 53,5 կիլո շաքար:

Սուբուրում և մանկերապարակում ընդգրկված են 60 յերեխաներ,
սնունդը մուրում գրված է լավագույն հիմքերի վրա. մեկ յերե-
խան որական ստանում է 200 գրամ կաթ, 20 գրամ շաքար, 20
գրամ բրինձ, 100 գրամ հաց, ստանում են նաև յուղ, խմորեղեն,
կանֆետ և այլն: 13 լավագույն հարվածայինների պարզևատրել
են: Բամբակի բերքահավաքին, ինչպես և այս գարնանացանին
կոլտնտեսականները մեծ մասամբ գերակատարել են նորմաները.
որինակ՝ Ջաֆար Մամեդովը որական հավաքում էր 110 կիլո
բամբակ, Գյուզալ Աբասովը՝ 95 կիլո բամբակ: Կադերի մեջ հո-
սունութ՛յուն չկա. նախագահը 1929 թվից մնում է նույնը և մեծ
հարգանք է վայելում: Վարչութ՛յունը կոլեկիտ դեկավարութ՛յուն
է ցույց տալիս. բոլոր կարևոր խնդիրները քննվում են վարչու-
թ՛յան նիստում և ընդհանուր ժողովում: 1933 թ. հունվարից
մինչև որս վարչութ՛յունն ունեցել է 10 նիստ: Արտադրութ՛յան
մեջ չեն աշխատում միմիայն վարչութ՛յան նախագահը, հաշվե-
տարր և պահեստապետը:

Կոմբիլի 13 անդամները և կոմյերիտական բժիշկի 18 անդամ-



ներն աշխատում են բրիգադներում: Բրիգադներում հոսունությունը միանգամայն վերացված է:

Պետութայնը վոչ մի կոպեկ պարտք չունեն: Կոլտնտեսութայն անբաժան ֆոնդը հավասար է 19,855 ուրբի 20 կ., վորին 1932 թ. յեկամուտներից հատկացված է 10,924 ուրբի: Այսպիսով ամեն մի տնտեսություն կուտակել է 150 ո. ավելի: 1932—33 թ. թ. ընթացքում 25 տնտեսություն կով և այլ կթան անասուններ են գնում:

Կոլտնտեսությունն ոգնել է մենատնտեսներին և յանել է նրանց բամբակից 30 հեկտար էր շարքացաններով և ձիերով: Կոլտնտեսությունն ոգնության է հասել հարևան գյուղի՝ Դոնդուզիանի անհատական տնտեսություններին: Կոլտնտեսությունը մրցում է Ներքին Նեջրուի և Յուվայի կոլտնտեսությունների հետ: Այս գարնանացանին Ուլուխանլուի կոլտնտեսությունը խնդրել ու տարել նրանից է 6 հատ մարկոս և 2 շարքացան, մինչև որս չի վերադարձրել և կոլտնտեսության վարչությունը հույս էլ չունի հետ ստանալու, քանի վոր Ուլուխանլուի 1932 թ. տարած 4 հատ մարկոսներն անհետ կորցրել են:

Ահա, ընկերներ, Շիրքուի կոլտնտեսության պատկերը: Համեմատեցիք այս յերկու կոլտնտեսությունները: Մեր բոլոր բամբակացան կոլտնտեսականները, մեր բոլոր կոլտնտեսականները թող լավ մտածեն և համեմատեն այս յերկու կոլտնտեսությունների գրությունը և բայրեիկյան յեզրակացություններ հանեն: Շիրքուի կոլտնտեսության փորձը ցույց է տալիս, վոր դժվար չէ կատարել բամբակի պլանը և բարեկեցիկ դարձնել կոլտնտեսականներին, յեթե վերջիններս աշխատում են ազնվորեն, յեթե բայրեիկորեն և կազմակերպված աշխատանքը կոլտնտեսության մեջ:

Ինչպես է առաջ գնում բամբակի մշակման գործն այս տարի բամբակացան չորս շրջաններում: Անցյալ տարվա համեմատությամբ՝ լավ: Կոլտնտեսականները՝ վորպես ընդհանուր յերևույթ՝ կոլտնտեսությունների մեծ մասում աշխատում են բարեխղճորեն: Բայց այդ գեռ քիչ է. ամենից առաջ մեր խնդիրն է ստեղծել այսպիսի գրություն, վորպեսզի լավ աշխատեն, բամբակի մշակմանը մասնակցեն բոլոր կոլտնտեսություններում բոլոր կոլտնտեսականներն անխտիր: Յերկրորդ—ցանքսի ուշանալու, անձրևային յեղանակների պատճառով ուշացավ բամբակի առաջին

մշակումը. այսպիսով արդեն լուրջ վտանգ է սպառնում բամբակի բերքատվությանը: Վտանգը վերացնելու միակ միջոցը մշակման արագացումն է և լավ վորակը: Իսկ շրջանները գրեթե բոլորն էլ հետ են մնում: Եջմիածնի շրջանի Արբաթի ագրոշրջանի մի շարք գյուղերում լավ ծլած բամբակը խեղդվում է մոլխոտների մեջ. հետ է մնում Ղուրղուղուլու շրջանը, հետ է մնում Ղամարլուն: Ընկերներ, հարվածային կոլտնտեսականներ, այդպես շարունակել չի կարելի: Որինակ վերցրեք միջին Ասիայի հարվածային բամբակացաններից, վորոնք լավ աշխատելով՝ մեկ հեկտարից ստանում են 15—20 ցենտներ բամբակ: Ժամանակին ջրեք բամբակը, մշակման գործն ապահովելու համար դիշերը ցրեկ դարձրեք: Վտարեք ձեր շարքերից ծուլերին և անպարտաճանաչներին, մի ոգնեք, հաց մի տաք նրանց: Թող լավ ապրի, ապահովված լինի միայն լավ աշխատողը: Կազմակերպեցեք իրական պայքար ամեն մի թուփ բամբակենու համար. ժամանակին վոչնչացրեք վրասատուներին: Հսկեք, վոր կուլակը անասունների վտանակի չանի, չփչացնի բամբակենին: Ապահովեք ամեն մի հեկտարից այս տարի 8 ցենտներ բամբակից վոչ պակաս: Միայն այս պայմանով է, վոր բամբակացան շրջանները պիտի կարողանան վերացնել պլանների թերահատարման սև բիծը, միայն աշխատելով է, վոր բամբակացան կոլտնտեսականները պիտի կարողանան ապահովել իրենց ընտանիքները հացով, բարեկեցիկ կյանք ստեղծել իրենց համար: Պայքարելով վոր լավ աճի, բարձրանա ու՜րար թամանա բամբակենու ամեն մի թուփ մեր դաշտերում, պայքարելով վոր ժամանակին բացվի և չփչանա և վոչ մի կընդունդ, վոր ժամանակին և լրիվ կատարվի բամբակի պլանը—այս պիտի լինի մեր համագումարի պահանջը բամբակացան շրջաններին կոլտնտեսականներին: (Յերկարատե ծափեր):

ԱՊԱՆՈՎԵԼ ՀԱՅԱՍՏԻԿԻ ԲԱՐՁՐ ԲԵՐԲԸ

Ընկերներ, գաղտնիք չէ, վոր անցած ձմեռը մի շարք շրջաններում անցավ հացի պակասության, իսկ առանձին կոլտնտեսություններում՝ հացի սուր կարիքի պայմաններում: Վոմանք տրամադիր են բացատրել այդ յերևույթը բացառապես կլիմայական

անբարենպաստ պայմաններով, բայց դա սխալ է, ընկերներ, կլիմայական պայմանները ճիշտ վոր լավ չեյին, բայց քիչ չեն դեպքեր, յերբ նույն պայմաններում իրար կողքի յերկու գյուղ ստացել են տարբեր բերք: Ուրեմն, բացի կլիմայական պայմաններին վճռական նշանակութունն է ունեցել այն, թե ինչպես են մշակել, ինչպես են կազմակերպել բերքահավաքն իրենք՝ կոտնտեսականները: Փաստերը հաստատում են, վոր վատ դրության մեջ ընկան այն կոտնտեսութունները, վորոնք անցյալ տարի վատ ցանեցին, ուշ ցանեցին, նկատի չառան ագրոնոմիական կանոնների տարրական պահանջները, մանավանդ վատ, անկազմակերպ անցկացրին բերքահավաքը: Բերենք մի քանի որինակներ:

Կոտայքի շրջանի Բաղդասուրի գյուղի կոտնտեսութունում անցյալ բերքահավաքին կորուստների դեմ պայքար չի մղվել: «Ղուբբաղլու» կոչված հողամասում հնձած 25 սայլ ցորենը և զարին յերկար ժամանակ մնում է դաշտում, փչանում է և բաժին դառնում մկներին: 141 հեկտար հացահատիկ կծղած մնացել է դաշտում: Սրա պատճառն այն է, վոր ղեկավարութունն անշտորհք է յեղել, բրիգադներում յեղել է հոսունությունն և բանուժը լրիվ դաշտ դուրս չի յեկել. որինակ՝ Սրտաշ Մուրադյանի բրիգադը հաճախ մի քանի որով իր անմիջական աշխատանքները թողած, ուրիշ աշխատանքի յի գնացել: Յեկ հետո Բաղդասունու կոտնտեսականների մի մասը գանգատվում է, թե վատ ենք ապրում:

Լենինականի շրջանի Ղոնաղ-Ղոնախի կոտնտեսութունը բերքահավաքը կատարել է շատ անկազմակերպ և խոշոր կորուստներով: Հնձված հաշմը գտնվում է դաշտում շատ մանր կույտերով, փչանում է արևից, անձրևից, քամիներից, փչացնում են անասունները: Դաշտում պահակներ չկան, վորի պատճառով գութութունն անխուսափելի յի: Կոտնտեսության վարչության անփութության շնորհիվ վեց հեկտար տարածութուն վարել են տրակտորով, առանց նախորդ այդ տարածութունից հնձած զարին տեղափոխելու, այդ պատճառով էլ զարու մեծ մասը մնացել է ակոսների տակ՝ ցրված հողերի մեջ: Քուլաշը տեղափոխելու ժամանակ փչացրել են սայլերը, ցրել են անազին քանակությամբ զարին:

Կոտայքի շրջանի Քեթրան գյուղի կոտնտեսութունը հացաբույսերի բերքահավաքին դուրս յեկավ հուլիսի 9-ին: Սակայն

քավարար չափով չեր նախապատրաստվել. չկային ջրի կժեր, մանգաղներ, մանգաղներ օրելու քարեր և այլն, և այդ ամենը ձեռք բերվեց 20 աշխատող ձեռք 3—4 որ պարապ թողնելուց հետո: Կոտնտեսության կողմից աշխատանքը վատ գլխավորելու հետևանքով առաջացել էյին հետևյալ լուրջ թերութունները. կորուստների դեմ պայքար չեր կազմակերպված, հուլիսի 26-ին կծղած զարին գերանդիով քաղելու հետևանքով 30 տոկոսով փչացել էր: Բերքի փոխադրման և կալման աշխատանքները մատնված էյին ինքնահոսի, վորովհետև վարչութունը ժամանակին չեր ճարել և կարգի բերել սայլեր, կամեր և այլ գործիքներ: Քամհար և սերմազտիչ մեքենաներն ամբողջ տարին թողել էյին անձրևի, արևի և ձյան տակ, վորից քամհարը փչացել էր: Կալած բերքը 5-րդ որը դեռ մնացել էր անձրևի տակ:

Լենինականի շրջանի Բաղդլի գյուղում բերքահավաքն անցյալ տարի ընթացավ դանդաղ, անկազմակերպ, անորակ: 150 հեկտար տարածութուն յերկար ժամանակ մնում էր առանց հնձելու՝ արևի տակ և կծղել էր, փչանում էր: 2-րդ բրիգադը քաղը կատարում էր անորակ և ուժերը լրիվ չեր ոգտագործում: Հակառակ յեղած հնարավորութուններին հնձված 60 հեկտար ցորենը, 10 հեկտար զարին, 2 հեկտար կտավատը մնացել էր դաշտում: Իրենց անդիսցիպլինարությամբ և լողությամբ աչքի էյին ընկնում Պետրոսյան Արշակը, Մելիքյան Գասպարը, Դանելյան Աղասին և կուսիկնածու Խորեն Պողոսյանը, իսկ կոմբլիշը և վարչութունը լուռ էր մնացել նրանց հանդեպ: Վարչութունը նույնիսկ բերքահավաքի մեքենայացման դեմ էր դուրս գալիս, չեր թույլ տալիս, վոր ՄՏԿ-ի հնձող կալող մեքենան աշխատի և միևնույն ժամանակ իրենց մոտ յեղած 4 հնձիչները չեր ոգտագործում, իսկ ցորենը կծղել էր, հնձող չկար:

Սանահնի կոտնտեսութունում հացահատիկի հունձը կատարված էր անորակ: Հնձված արտերում թափված էր հասկերի մոտ 15 տոկոսը, իսկ բրիգադներն ուշադրութուն չեյին դարձրել դրա վրա, կալված հացահատիկը ժամանակին չեն տեղափոխել ամբարները, չնայած վոր կոտնտեսութունն ունի 50 զույգ յեղ, վորից միայն 30 զույգը հողիվ են աշխատում, և 30 ձի, վորոնք պարապ են: Անկազմակերպության հետևանքով 4 հեկտար զարնան ցորենի 60 տոկոսը փչացավ:

Շամշադնի շրջանի Հախում գյուղի կոլտնտեսութեան դաշտից 40 խուրձից ավելի հացահատիկ են գողացել: Բերքի ճիշտ հաշվառում չլինելու հետևանքով բրիգադիր Ա. ր ա մ Մ ի ս կ ա ր յ ա ն ը՝ ըստ կոլտնտեսութեան վարչութեան չեկերի արմատներէ, հուլիսի 20-ից մինչև ոգոստոսի 17-ը հացահատիկ ե հանձնել 993 փութ, իսկ ըստ նարյադի նա 1170 փութ պետք է տար: Ո՛ւր գնաց իսկ ըստ նարյադի նա 1170 փութ պետք է տար: Ո՛ւր գնաց 177 փութը: Ընկերներ, դեռ շատ կարելի յի յերկարացնել որի՝ նակներն այս շարանը: Բայց բավական ե: Բերածս փաստերը բավական են, վորպեսզի մեր բոլոր կոլտնտեսականները, բոլոր կոլտնտեսութեանները լավ մտածեն, վերհիշեն անցյալ տարվա բերքահավաքի սխալներն ու թերութեանները, անհրաժեշտ դասեր առնեն այս տարվա աշխատանքների համար: Մեր կոլտնտեսականների համար թող որինակ հանդիսանա Աղաջուտուն գյուղի դաշտավարական բրիգադի բրիգադիր Կարոն, վորն ըստ իր արտադրական պլանի 61 հեկտար աշխանացան ցորենից պետք է բերք տար 732 ցենտներ ցորեն, հաշվելով հեկտարից 12 ցենտներ, բայց ընկեր Կարոն իր և իր բրիգադի անդամների բարեխիղճ աշխատանքի, հողը լավ մշակելու, բերքահավաքը լավ կազմակերպելու հետևանքով ստացավ ավելի բարձր բերք, հեկտարից 13 ու կես ցենտներ, և կոլտնտեսութեան վարչութեանը հանձնեց 832 ցենտներ ցորեն: Միթե ճիշտ չէ, ընկերներ, վոր յեթե մեր բոլոր կոլտնտեսականները և բրիգադիրներն աշխատեն Կարոյի բրիգադի պես, կարճ ժամանակում մենք կկարողանայինք կըրկնապատկել մեր հացահատիկի դաշտերի բերքատվութեանը:

Քիչ ժամանակ ե ֆուումինչև բերքահավաքը: Ձեռները ծալած չի կարելի նստել վոչ մի որ, վոչ մի ժամ: Բոլոր շրջաններում, յեթե ուզում ենք ապահովել բարձր բերք, պետք է անմիջապես մասսայորեն դաշտ դուրս գալ, ըստ բրիգադիների մաքրել, քաղահանել հացի դաշտերը մոլախոտից, ժամանակին ջրել ջրովի հողերը, պահպանել արտերն անասուններից, փչացումից: Պետք է անմիջապես պատրաստվել բերքահավաքին, նորոգել, բաժանել բրիգադիներին բոլոր գործիքները, կազմել արտադրական առաջադրութեաններ ամեն մի բրիգադի համար: Բերքահավաքն սկսելով ճիշտ ժամանակին և վերջացնելով կարճ ժամանակում, մենք պիտի ապահովենք բարձր բերք մեր դաշտերից, չթողնելով, վոր կորչի-փչանա կամ գողացվի և վոչ մի հասկ, և վոչ մի հատիկ ցորեն ու գարի:

ՍՐԵԼ ԳԵՐԱՆԴԻՆ, ԻՐԱԿԱՆՈՒՄ ԱՌԱՋ ՄՂԵԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒՅՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընկերներ, յեթե անցյալ տարի մի շարք շրջաններ հացի նեղութեան էյին կրում, ապա անասունների համար կերի նեղութեանը պակաս զգալի չէր նույն այդ շրջաններում: Ղարաքիլիսայի, Մարտունու նման խոտաշատ շրջաններն այն որն էյին ընկել, վոր խնդրում էյին մեզնից, Յերևանից խոտ հասցնել իրենց, յերևի կարծելով, վոր Արոյան փողոցից մենք նրանց համար խոտ պիտի հնձեյինք: Խոտի պակասութեանը նույնպես հիմնականում արդյունք էր կոլտնտեսականների անցյալ տարվա վատ աշխատանքի և անհող վերաբերմունքի դեպի անասնապահութեան խնդիրները: Այդ հանցագործ անհողութեանից ոգտվեց դասակարգային թշնամին, վոր լավ հասկանալով անասնապահութեան նշանակութեանը, նրա վարձացման դժվարութեանները, մեծ յեռանդով ուղղեց իր հարվածները սոցիալիստական անասնապահութեան դեմ: Բազմաթիվ կոլտնտեսութեաններ անասնապահութեան գծով այս տարի կորուստներ ունեցան. այդ կորուստների մեղքը, պատասխանատվութեանն ընկնում է նաև մեր հարվածային կոլտնտեսականների վրա, վորովհետև նրանք անհրաժեշտ հոգատարութեան և աշխրջութեան չեն ցուցաբերել անասնապահութեան ֆրոնտում:

Վերցնենք Համամուրի կոլտնտեսութեանը, այդ կոլտնտեսութեանը մի տարվա ընթացքում բավական խոշոր քանակութեամբ անասուն կորցրեց: Վնասարարների, կուլակների հայտնաբերումը և պատիժը չի վերացնում Համամուրի կոլտնտեսականների պատասխանատվութեանն այս խայտառակութեան համար. նրանք մեղավոր են, վոր յերկար ժամանակ կույր և անճար են յեղել ու թույլ են տվել ֆնասարարներին կատարել իրենց գործը: Կամ Սանահնի կոլտնտեսութեանը. ձմռանը սանահնիցիները խոտի խիստ կարիք էյին զգում միայն այն պատճառով, վոր փչացրին իրենց խոտհարքները, շատ քիչ խոտ հավաքեցին, հավաքածի մի մասն էլ շան ու գելի բաժին դարձրին: Քեշիշքեհդի շրջանի Որթաքյանդ, Թառաթումը, Արփա և այլ կոլտնտեսութեանները կերն անխնա ծախեցին, վատնեցին, խառնեցին ցելի և աղբի հետ ու փչացրին, իսկ ձմռանն անասուններն առանց կերի կորստով էյին: Ստեփանավանի Հորարձի գյուղի կոլտնտեսու-

կում մենք կունենանք կոլտնտեսային անասնապահության չտեսնված աճ: Մեր յերկրի բնական պլայմանները լայն հնարավորություններ են տալիս դրա համար:

Ուրեմն սրել մեր դերանդին, լավ անցկացնել խոտհարքը, պահանջել մեր անասունները լավ վորակի, հյութեղ կերով, ամենալավ ու նվիրված կոլտնտեսականներին դնել անասնապահության գծով աշխատելու, լավացնել, մաքուր պահել գոմերը, այսպես և դրվում խնդիրը: Այս միջոցառումներով է, վոր մենք պիտի ապահովենք կոլտնտեսային անասնապահության արագ աճումը այս իսկ տարվանից:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻՑ ՄԵԿԸ

Ընկերներ, չնայած այգեգործության, խաղողի մշակության լայն հնարավորություններին՝ մեր կոլտնտեսությունները մինչև այժմ աչքաթեղ են արել գյուղատնտեսության այս կարևոր ճյուղը: Նույնիսկ այնպիսի շրջաններ, վորպիսիք են Աշտարակը, Եջմիածինը, Ղամաբլուեն, Մեղրին՝ կոլտնտեսային այգեգործության գծով գրեթե առաջ չեն շարժվում, արդեն չեմ խոսում մի շարք կոլտնտեսությունների մասին, որինակ՝ Փարաքարինը, «Անաստված»-ը, վորոնք վատ մշակելու հետևանքով նույնիսկ հին այգիների մի մասը փչացնում են: Մթթե ամոթ չե մեր կոլտնտեսականներին համար, վոր քանի գնում և այնքան քիչ են արտադրվում մեր լավ տեսակի դեղձերը, մեր լավ խաղողները: Այստեղ նույնպես շատերը տրամադիր են, որինակ, այգիների այս տարվա բերք չտալը բացատրել ձմռան ցրտերով: Ձմռան ցրտերն, իհարկե, մեծ վնաս հասցրին, բայց ո՞վ կարող և բացասել, վոր տարիների ընթացքում այգիների վատ մշակումը, չփորելը, չբուժելը նույնքան, յեթե վոչ ավելի, վնաս հասցրին մեր այգիներին: Ընկերներ, այսպես շարունակել չի կարելի: Մենք կառուցում ենք պահածոների խոշոր գործարաններ, բայց այդ գործարանները մնում են առանց հումքի, բանվորները, աշխատավորները իրավացիորեն միրգ են պահանջում, բարձրանում և նրանց նյութական դրությունը, իսկ այգեգործության ներկա դրությունը հնարավորություն չի տալիս բավարարել աշխատավորների աճող պահանջները: Մեր համագումարը պետք է պահանջ դնի կոլտնտե-

սությունների առաջ, ամեն կերպ զարկ տալ այգեգործությանը, հենց այս աշնանից սկսած նոր այգիներ գցել, խաղողի պլանտաժի ձեռնարկել, լամ մշակել բոլոր հին այգիները, խնամել սրտով ու բարեխիղճ կերպով ամեն մի ծառ և ճյուղ, պատվաստման միջոցով լավացնել պտուղների վորակը, մի խոսքով՝ լայն ոգտագործելով մեր հողը, շուրը և տաք արևը, Խորհրդային Միության այգեգործական շրջանների մեջ մեզ արժանի առաջնակարգ դիրք գրավել: Այգիները լայնացնող, մշակող, ծաղկեցնող կոլտնտեսականին բարձր հարգանք, լայն ոժանդակություն:

ԼՐԻՎ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՇԵՐԹԻՆ ԿԱՏԱՐԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՆԴԵՊ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԵՐՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ընկերներ, մոտենում է բերքահավաքը: Բերքահավաքով, բերքի բաշխումով ավարտվում է գյուղատնտեսական տարին: Զնայած մեր բայշեկյան կուսակցության ցուցումներին, անցյալ տարի բերքահավաքը և բերքի բաշխումը մեր կոլտնտեսություններում անցավ անկազմակերպ, մի շարք կոպիտ սխալներով: Ամենահիմնական սխալն այն էր, վոր մեր կոլտնտեսությունների մեկ խոշոր մասը չեր յուրացրել այն առաջին ճշմարտությունը, թե խոշոր մասը չեր յուրացրել այն առաջին ճշմարտությունը, թե տարել իր պարտավորությունները բանվորագյուղացիական պետության հանդեպ: Կոլտնտեսությունները մատների արանքով եյին նայում հացամթերումներին և գյուղատնտեսական այլ մթերումներին պլաններին կատարմանը, մյուս կողմից էլ հակակոտրնտեսական տարրերը շուայում, փչացնում, հափշտակում եյին հացահատիկը: Տեղ-տեղ յեղել են դեպքեր, յերբ հացը բաժանել են վոչ թե ըստ աշխուրի, այլ տնավարի, ըստ շնչերի, հավասար չափով:

Ընկերներ, խայտառակություն կլինի, յեթե այս տարի ամենափոքր չափով անգամ կրկնվեն անցյալ տարվա սխալները: Ձեռնարկելով բերքահավաքին, ամենից առաջ պետք է այնպես կազմակերպել բերքահավաքի գործը, վորպեսզի կորուստներ չուկաղմակերպվել բերքահավաքի գործը, վորպեսզի միայն ժամանակ, վոչ էլ պահեստում: Անխնա պետք է լինել գողերի և հափշտակողների նկատմամբ: Խորհրդային իշխանության որենքները, ոգոստոսի 7-ի

հայտնի որենքը հնարավորութունն է տալիս, ինչպես վոր հարկն է հարվածել սոցիալիստական հանրային գույքի թշնամիներին: Կոլտնտեսականներն իրենք աչալուրջ պետք է հսկեն, վոր մեր դաշտերից, մեր կոլտնտեսային պահեստներից վոչ մի հացի հատիկ կուլակին, գողին, ծուլին բաժին չդառնա:

Իերքը հավաքելուց, հացի կալսելը սկսելուց անմիջապես հետո, կոլտնտեսականների, ինչպես նաև մենատնտեսների առաջին պարտականութունն է պետութայնը հանձնել հացահատիկը, համաձայն պետութայնը հացահատիկ հանձնելու պարտադիր որենքի: Այդ որենքը, վոր վողջունվեց կոլտնտեսային դյուզացիութայն կողմից, լիակատար պարզութունն է մտցնում պետութայն հանդեպ ստանձնած պարտավորութունները կատարելու հարցում: Նա բարելավում է լավ աշխատող կոլտնտեսութունների դրութունը, վորովհետև յեթե նրանք լավ աշխատեն, լավ բերք ստանան, ավելի շատ հաց կմնա իրենց կարիքների և կոլտնտեսային առևտրի համար, քանի վոր առաջուց հայտնի յե ամեն մի հեկտարից պետութայնը հանձնվելիք հացի պարտադիր քանակը: Որենքով սահմանված հացի քանակը պետութայնը հանձնել առաջին հերթին, ահա կոլտնտեսութայն ամրացման, բայլլեհկացման հիմնական ցուցանիշը: (Մ ա փ ե ր): Չկրկնելով անցյալ տարվա սխալը, մեր կոլտնտեսութունները պիտի ամենակարճ ժամանակում հանձնեն հացը, չերկարացնեն հացի հանձնումը շաբաթներով, հացամթերման հետ միաժամանակ վերադարձնելով պետութայնը ստացած պարենային և սերմֆոնդի վարկը:

Պետական պարտավորութունները կատարելուց, պարտքերը վճարելուց անմիջապես հետո յուրաքանչյուր կոլտնտեսութուն պետք է առանձնացնի աշնանացանի և գարնանացանի սերմացուն, չափով, կլիռով և գտված, առանձնացնի ապահովագրական ֆոնդ, վորից հետո մնացած հացահատիկը ամբողջութամբ բաժանի կոլտնտեսականներին՝ բացառապես ըստ աշխորերի: Հացի բաշխման ժամանակ վոչ մի խղճահարութուն ծուլերի նկատմամբ, վորոնք աշխոր չունեն: Աշխատողը միայն կուտի. այս մասին քանի տարի յե, վոր նախազգուշացնում ենք բոլորին՝ մեղքը չաշխատողի վզին:

Այսպիսով ամեն մի կոլտնտեսական պետք է միշտ նկատի ունենա, վոր պետական պարտավորութունների կատարումը Խորհրդային պետութայնն իրոք նվիրված յուրաքանչյուր կոլտն-

տեսութայն և կոլտնտեսականի առաջնագույն գործն է, սրբազան պարտականութունը: Պետական պարտավորութունների կատարումը կոլտնտեսութայն ամրացման առաջին չափանիշն է: Յեվ մեր այս համագումարը պետք է համահայաստանյան մրցակցութուն հայտարարի բոլոր շրջանների և կոլտնտեսութունների միջև հացի և այլ մթերքների մթերումների պլանները լրիվ և ժամանակին կատարելու համար: (Մ ա փ ե ր):

ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՈՒՆԵՎՈՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՈՒՂԻՆ ԲԱՐԵՒՂՃ ՅԵՎ ԱՁՆԻՎ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե

Ընկերներ, մենք արդեն խոսեցինք ստալինյան մեծ լողունգի մասին՝ թե բոլոր կոլտնտեսականներին միքանի տարում մենք պետք է ունենոր դարձնենք: Այդ լողունգն իրագործելի յե և պետք է իրագործվի: Մեր առաջավոր կոլտնտեսականների և կոլտնտեսութունների փորձը վկայում է այդ մասին: Մենք կարող ենք բերել հարյուրավոր և հազարավոր որինակներ, թե ինչպես յերեկվա դառը չբավորը կոլտնտեսութուն մտնելով ազնվորեն և բարեխիղճ կերպով աշխատելով արդեն վարում է բարեկեցիկ կյանք, սւնտրի կյանք:

Ահա ձեզ, որինակ՝ ճաթողանցի կոլտնտեսական թ ա դ և ո ս Մ ա ն ու կ յ ա ն ր. ընտանիքը բաղկացած է 10 շնչից և յերեք աշխատողից: 1932 թվին ուներ 400 աշխոր, ստացել է 1840 կիլո հացահատիկ, 24 կիլո յուղ, 64 կիլո պանիր, 40 կիլո լոբի, 6 կիլո մեղր, 6 կիլո կանեփ: Անհատական ոգտագործման տակ ուներ 8 վոչխար: Ստացել է 1640 կիլո դարման, 400 կիլո խոտ:

Հայ-Ղվինի կոլտնտեսութայն անդամներն արդեն սկսում են ունենորի կյանք վարել: 1931 թվին յուրաքանչյուր աշխորին հասավ 10 ուրլի, իսկ 1932 թ.՝ 25 ուրլի: Կոլտնտեսութայն սավ 10 ուրլի, իսկ 1932 թ.՝ 25 ուրլի: Կոլտնտեսութայն անդամ Բ ա դ ր ա տ Թ ա ր Վ ե ր դ յ ա ն ը, վորը 1931 թ. ուներ 135 աշխոր, 1932 թվին ուներ 400 աշխոր (ընտանիքի հետ միասին): Ամեն մի աշխորին 25 ուրլի հաշվով նա ստացավ 10 հազար ուրլու գրամական յեկամուտ և 1600 կիլո ցորեն: Նույն համեմատութայնբ բավարարվել են նաև մյուս կոլտնտեսականները:

Անդրանիկ Մարտիրոսյանը (Թագազյուղ) պատմում է. — «Կոչեկտիվ կազմակերպելուց առաջ, ճիշտ վոր ասենք, շան կյանք էյինք քաշում: Յեա չբավոր դյուզացի էյի, աշխատում էյի կու-

լակի համար, քնուժ եյի նրա գոմուժ և ուտուժ եյի... կնոջս հարց-
րեք՝ թե ինչ նա դեռ չի մոռացել, թե ինչպէս շարաթներ շարու-
նակ ապրում եյինք հարևաններէց խնդրած թաւով: Հիմա յես
նոր, գեղեցիկ տուն ունեմ, տանս ուղիտ կա, պահարանում կինս
յոթ ձեռք նոր շոր ունի, ենքան անկողին ունեմք, վոր ամբողջ
ընտանիքը կարող ե պառկել, դեռ հյուր ել կարող եմ ընդունել,
իսկ կերածներս...»:

Այդ ժամանակ նրա կինը սեղանի վրա շարեց սպիտակ հաց,
վոջխարի յեփած միս, պանիր և փլավ: Անդրանիկի բակում խոյ-
տում են նրա վոջխարները, հավերը, գոմում կապած ե նրա կո-
վը: Դեռ անցյալ տարի կոլտնտեսականների միայն 40 տոկոսն
անհատական ոգտագործման տակ կովեր ունեյին, իսկ այս տարի՝
80 տոկոսը:

Ախտայի շրջանի Թայչարուխի կոլտնտեսութեան միջակ գյու-
ղացի Արզուման Մարգարյանն իր աշխորերի գիմաց 1932
թվին ստացել ե 27 ցենտներ հացահատիկ, 13 կիլո յուղ, 31 կիլո
պանիր և այլ մթերքներ: Նա կոլտնտեսութեան ժողովում հայ-
տարարեց՝ «Յես այսքան տարի միջակ գյուղացի յեմ,
մորսւց յեղել եյի, այդքան բերք իմ տանը չեյի տե-
սել»:

Գրիգոր Ներսիսյանն (Մարտունու շրջանի Զուլխաչ գյու-
ղի կոլտնտեսութեան անդամ) ասում ե՝ «Մինչև Սորհրդային իշ-
խանութեան հաստատվելը յեղել եմ ճնշված և իրավազուրկ: Դեռ
15 տարեկան հասակից յես բատրակ եմ յեղել գյուղի հայտնի
կուլակ Կարախանովի մոտ: Կարախանովն ինձ տարին 20 մանեթ
եր տալիս և աշխատանքիս չափ ու սահման չկար, իսկ կերածս
չոր հաց եր և քնում եյի գոմում: Յերը մեծացա, ել համբերու-
թյունս չտարավ. վեր կացա ուղիղ բռնեցի Բազվի ճամբան, բայց
պետք ե ասեմ, վոր Բազվում ել մի որ չեյինք քաշում: Հինց վոր
Սորհրդային իշխանութեան հաստատվեց, ճաններս ճուղ կանգ-
նեց: Վերջպէս ազատ շունչ քաշեցինք և մեր հալալ քրտինքի
տերը զարձանք: 1929 թ., յերը մեզ մոտ սկսվեց կոլխոզ կազմա-
կերպվել, առաջիններից մեկը յես եյի, վոր գրվեցի: Կուլակները
հազար ու մի բան ասին, չլսեցի: Կոլխոզից ստացած յեկամուտը,
վոր համեմատում եմ սրանից մի 15 տարի առաջ ստացած յեկա-
մուտիս հետ, մազերս բիզբիզ են կանգնում: Յես ունեմ 310 աշ-
խոր, դրա գիմաց վորպէս ավանս ստացել եմ 9 ցենտ. հացահա-

տիկ, 10 կիլո յուղ, 30 կիլո պանիր, 6 ցենտ. կարտոֆիլ, 2 ցենտ.
ճակնդեղ, 5 ցենտ. կաղամբ: Առաջ կով ունենալու մասին մտա-
ծել չեյի կարող, հիմա ունեմ մեկ կով, յերեք վոջխար: Են ժամա-
նակ վոր գոմի մարում եյի քնում, հիմա ունեմ մի փոքրիկ լու-
սավոր տուն: Ծնորհիվ մեր սամետական կառավարութեան, հիմա
թերթեր ու գրքեր եմ կարդում»:

Շարիֆ Իբրահիմով (Ախտա. Ուլաչիկ—Գարաչիչակ).—
«Մրանից 15—16 տարի առաջ բատրակ եյի հայտնի մյուլքատեր
Մահմեդ քոխվայի մոտ, յես վոր ասեմ սրական մի փայտի հար-
ված պիտի ուտեյի, դու հինգը հասկացի:

— Շարիֆ, թե վոր մեկ տարի ծառայես, մի հատ լավ կով եմ
տալու,— ասաց աղեն:

Համաձայնեցի: Բա ինչ պիտի անեյի, ապրել եր հարկավոր:
Բայց յերը ժամանակը լրացավ, խոստացած կովը չտվեց: Դնաց
բազարից մի լղար դանտ առավ ու են տվեց, դեռ 15 որ չանցած
եդ դանեն «վոտքերը փոեց»: Հենց վոր Սորհրդային իշխանու-
թյունը հաստատվեց, մեզպէսները նոր սկսեցին հասկանալ աշ-
խարհի չարն ու բարին: Նախքան կոլեկտիվ մտնելս, յես կա-
րողացա ինձ համար մի փոքրիկ անտեսութեան ստեղծել, իշխա-
նությունը վարկ տվեց, ամեն կերպ ոգնեց ինձ: Հինց վոր կու-
լտնտեսութեան սկսեցի հարվածային աշխատել: Կոլխոզը շարաթոր-
յակի միջոցով իմ սենյակը կանոնավորեց: Այժմ ունեմ կարգին
սենյակ և մաքուր անկողին: Գրել, կարդալ եմ սովորել: Յես մե-
նակ մի շունչ եմ, վորպէս ավանս ստացել եմ 17 փութ ցորեն,
7 փութ հաճար, յուղ և այլն: Ստանում եմ թերթեր, վոր առաջ
դրա մասին չեյի կարող մտածել»:

Թալինի Այնալու գյուղի կոլտնտեսութեան դաշտավարական
բրիգադի հարվածային կոլտնտեսական Մանուկ Սաչաալը-
յանը իր մասին ասում ե՝ «Յես յեղել եմ միջակ տնտեսատեր.
Գյուղում կոլխոզ կազմելու ժամանակ 8 տնտեսութեանից մեկը
յես եմ յեղել: 1932 թ. յես մենակ ունեցել եմ 334 աշխոր: Ըն-
տանիքիս անդամների հետ միասին ունեցել եմ 516 աշխոր: Բեր-
քի բաշխման ժամանակ ստացել եմ 2660 կիլո ցորեն, 154 կիլո
զարի, 6,7 կիլո բուրդ, 33,5 կիլո յուղ, 11,1 կիլո պանիր (ան-
քաշ), 16,6 կիլո ձեթ, 516 կիլո խոտ, 2064 կիլո դարման, 129
կիլո կաթ, 129 կիլո ճակնդեղ և 1000 հատ ել ցան: Անհատ
տնտեսատեր յեղած ժամանակս իմ ընտանիքի անդամները յեր-
բեք այդքան ցորեն և կաթնամթերք չեն ունեցել:

Առաջ մեր կաթնամթերքը վերջանում եր ձմռան կեսը դեռ

չհասած, իսկ հիմա յես միանգամայն սարսռովված եմ մինչև նոր կաթնամթերքի և հացի ստացվելը: Մինչ կոխող մտնելը վոչ կոշիկ էյի հագել և վոչ էլ վերարկու: Կոխող մտնելուց հետո յես կոշիկ և վերարկու յեմ հագնում: Իմ անտեսութեան մեջ ունեմ՝ մեկ կով, մեկ հորթ, վեց վոչխար, չորս թոխիչ և չորս մեղրի փեթակ»:

Կարելի յե անվերջ շարունակել այս կենդանի մարդկանց փկալութեանը: Ճիշտ է, դեռ վոչ բոլոր կոլոնատեսութեաններն ու կոլոնատեսականներն են հասել բարեկեցիկ դրութեան: Կան նեղ դրութեան մեջ գտնվողներ, ըայց նեղութեան մեղքն ամենից ատաջ հենց իրենց՝ նեղութեան քաղաքները վրա յե ընկնում: Նրանց վատ աշխատանքն է պատճառը դեռ քաղվող նեղութեանները: Վարայդ այգրես է, յերևում է Փարաքարի կոլոնատեսութեան սրինակով:

Անցյալ տարի Փարաքարի կոլոնատեսութեանն ուներ բոլոր նյութական պայմաններն իր անդամների մեծամասնութեանը, գոնե հարվածային կոլոնատեսականներին, ունեորի աստիճանի հասցնելու համար:

Իրա համար ինչ ունեյին նրանք: 103 հեկտար լսադողի ընտիր այգի և 150 հեկտար բամբակի ցանք:

Անասունները, մեքենաները, գործիքները, այլ տեսակի ցանքը և կոլոնատեսականի անհատական ոգտագործման միջոցները յիթե մի կողմ թողնելու լինենք, միայն բամբակի ցանքը և այգիները հերիք է, վորպեսզի Փարաքարի կոլոնատեսականները այս տարի բարեկեցիկ դրութեան մեջ լինեյին:

Սակայն նրանց մի մասն այս տարի հացի և այլ մթերքների խիստ նեղութեան կրեց, վորովհետև կոլոնատեսութեան ղեկավարութեանը և կոլոնատեսականների մեծամասնութեանը անցյալ տարի շատ վատ աշխատեցին և դրանով էլ փչացրին բարեխիղճ ու հարվածային կոլոնատեսականների աշխատանքը:

Փարաքարի կոլոնատեսութեանն անցյալ տարի մեկ հեկտարից միջին հաշվով ստացել է 2 ցենտներ բամբակ, իսկ այգիներից ստացել է յուրաքանչյուր հեկտարից 5 ցենտներ խաղող, մինչդեռ նա կարող էր բամբակ ստանալ հեկտարից ամենապակասը 7 ցենտներ, իսկ խաղող՝ 50 ցենտներ: Հետևապես իրենց վատ ու անբարեխիղճ աշխատանքի հետևանքով Փարաքարի կոլոնատեսականներն անցյալ տարի կորցրել են 4635 ցենտներ խաղող և 750 ցենտներ բամբակ: Այդ քանակութեանը բավական

է, վորպեսզի Փարաքարի կոլոնատեսութեանն բոլոր 165 տնտեսութեաններն էլ ոգտվեյին առատ մթերքներից և բարեկեցիկ կյանք վարեյին:

Իսկ ինչո՞ւ նրանք քիչ բերք ստացան:

Վորովհետև առաջինը կոլոնատեսականների մեծ մասը շատ վատ աշխատեց: Լողրերի մի բազմութեան էր առաջացել կոլոնատեսութեանում: Սերմը զցիցին ուղղակի Հայերի մեջ: Գողհանի ժամանակ կոլոնատեսականների մի խոշոր մասը դաշտ դուրս չեկավ, իսկ կանայք այնտեղ տիրող սովորութեան համաձայն քաղհանի չզնացին: Լողրութեանը Փարաքարում արդյունք էր կոլոնատեսութեան մեջ իրացված թշնամու կազմակերպած սարսռածի: Թշնամու ազիտացիայի հետևանքով մինչ վերջին ժամանակներս մենք Փարաքարի կոլոնատեսութեանում մեծամասնութեան չունեյինք, կոլոնատեսականների մեծ մասը չէր հավատում իր սկսած գործին և սրտալի գործի չէր կաշում:

Իրա հետևանքով մոլախոտը խեղդեց բամբակին և այգիները բերք չտվին: Կոլոնատեսութեանը ստիպված յեղավ իր բամբակից 20 հեկտար հանձնելու հարևան Արբաթի կոլոնատեսութեանը, վրան էլ 15 հեկտար խաղողի այգի, վորպեսզի արբաթցիք համաձայնեն նրանց փչացած գործը շահել:

Փարաքարի կոլոնատեսականների վատ ապրելու յերկրորդ պատճառն այն է, վոր ղեկավարութեան կողմից վատ էր կազմակերպված աշխատանքը, վատ էյին կազմակերպված բրիգադները:

Այդ կոլոնատեսութեանում տեղի ունեցան այսպիսի խայտառակութեաններ. կոլոնատեսականներն՝ անարգել անցնում էյին մեկ բրիգադից մյուսը, նրանք ինքնազուլի դնում էյին այն բրիգադի մարմադրութեան տակ, վորի արտն ավելի մոտ էր գյուղին, կամ ավելի քիչ էր վարակված մոլախոտերով:

Վոր բրիգադիքը գոչաղ էր, նա մարդիկ էր խլում հարևան բրիգադներից: Ով շուտ էր գարթնում, անե տուն էր ընկնում և ուրիշ բրիգադներից մարդիկ հավաքում իր բրիգադի համար: № 1 բրիգադի ղեկավար Սողոմոն Վարդանյանը պարճանքով պատմում է, վոր շարունակ մարդիկ է գրավել 4-րդ բրիգադից, վորի ղեկավարն Աշոտ Այվազյանն էր:

— Շուտ վեր էյի կենում և Աշոտի բրիգադի անդամներին իրասուսմներով համոզում, վոր ինձ հետ գան: Յեվ զալիս էյին: պատահում էր, վոր որական 10 հազի էյի խլում այդ բրիգադից, — Պատմում է նա:

Հետևանքը յեղավ այն, վոր Աշոտ Այվաղյանի բրիգադը հուլիսին ցրվեց, հողերը մնացին անմշակ և հանձնվեցին Արքայի կողմից: Իհարկե, այսպիսի կարգ ու կանոնով բերք չես ստանա:

Կա խիստ հոսունություն նաև բրիգադիրների կազմում. № 3 բրիգադի ղեկավար Մամբրե Սարգսյանը կատարել է բրիգադի այգեքացը, ետը և փորելու աշխատանքը: Նրան փոխեցին: Նոր բրիգադիր Մկրտիչ Ավետիսյանը այգիները սրահելուց և խոտը քաղելուց հետո փոխվեց: Նրան փոխարինող Պողոս Մելքոնյանը բերքի կեսը հավաքեց և բրիգադը հանձնեց Ասատուր Գևորգյանին, վորը և հավաքեց բերքի մնացորդները և այգիները քաղեց: Դե, յեկ պարզիր, թե ով է ցածր բերքի պատճառը:

Այդ բոլորի պատճառով հնարավոր չեղավ բրիգադիների աշխուրհի քանակն ավելացնել կամ պակասեցնել մինչև 20 տոկոսով (նայած նրա աշխատանքի արդյունքին), վորովհետև հայտնի չէր, վոր կոլտնտեսականը վերստեղ, ինչքան է աշխատել:

Ահա ինչու վատ բերք ստացավ Փարաքարի կոլտնտեսությունը:

Հարևան կոլտնտեսությունները իրավացիորեն շրջանային հավաքում ուղտիմատում ներկայացրին Փարաքարի կոլտնտեսության.

— Հերիք է մեր անունը խայտառակեք:

Իհարկե, յեթե փարաքարցիներն այս տարի յեկ «աշխատեն» այնպես, ինչպես անցյալ տարի, նրանք ավելի սուր կարիքի մեջ կընկնեն: Ինձ հավատացնում են, վոր անցյալ տարվա դասերից փարաքարցիները խելքի յեն յեկել, այս տարի լավ են աշխատում, ավելի լավ է կազմակերպված աշխատանքը կոլտնտեսության ներսում: Ճիշտն ասած՝ խոստումները, «ոպորտաները» այն մասին, թե «ինչ պիտի անենք», մեղ յերբեք չեն բավարարել և չեն բավարարի: Հենց հիմա, համագումարի առաջին նիստին նախագահություն սեղանի վրա արդեն կուտակվեց ոպորտաների խոշոր մի կույտ. թույլ ավելք պահել այդ ոպորտաները և 1—2 ամիս հետո հաշիվ պահանջել ամեն մի կոլտնտեսությունից՝ ոպորտաները, խոստումները իրականում կատարելու մասին: (Ծ ա փ ե ր):

Սպասենք մինչև բերքահավաքը և պետական պարտավորությունների կատարումը և կտեսնենք նմանապես, թե ինչքան իրական և խորն է այն բեկումը, վոր առաջ է յեկել Փարաքարի կոլտնտեսականների մեջ:

Մի բան պարզ է և վորևե կասկածից դուրս: Դեպի լավ կյանք, ունևոր բերեկեցիկ կյանք տանող դռան բանալին գրաստիվում է իրեն՝ կոլտնտեսություն, կոլտնտեսականի ձեռքին:

Այդ բանալին բարեխիղճ աշխատանքն է, աշխատանքի արտադրողականությունն է բարձրացումը, սրտացավ վերաբերմունք դեպի կոլտնտեսային գույքը, աշխատանքի վարձատրությունն ըստ աշխատանքի և կոլտնտեսային սեփականությունն ամրացումը: (Ծ ա փ ե ր):

Մեր բոլոր կոլտնտեսությունները լավ կազմակերպված այս խնդիրների լուծումը պետք է կոնկրետ մոտենան ամեն մի առանձին կոլտնտեսականի, նրա հետ միասին կազմեն կոլտնտեսականին ունևոր դարձնելու ձեռնարկումները ձրագիրը, վոր պեսզի ամեն մի կոլտնտեսական պարզ հեռանկար ունենա, թե ինչ միջոցներով, ինչ աշխատանքով և կոլտնտեսության կողմից ինչպիսի ռժանդակությունը նա պիտի կարողանա ստեղծել իր համար բարեկեցիկ կյանք:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՄԱՆ. ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄՏՆԵԼԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ՅԵԼՔՆ Ե ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՊԱԳԱ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Ընկերներ, Հայաստանի կոլտնտեսությունները միացրել են մեր բոլոր գյուղացիական տնտեսությունների 38,2 տոկոսը: Սա փոքր հաջողություն չի, մանավանդ յերբ նկատի յենք առնում, վոր կոլտնտեսությունների մեծ մասը զգալի հաջողություններ ունեն աշխատանքի կազմակերպման, իրենց տնտեսությունների քաղաքական, կազմակերպական և տնտեսական ամրացման ուղղությամբ: Բայց կանգ առնել կոլեկտիվացման 38 տոկոսի վրա մենք չենք կարող: Մենք տեսնում ենք, թե ինչպես մենատնտես գյուղացիները, միջակ գյուղացիները, փորձով համազվելով կոլեկտիվ տնտեսությունների անավելությունների մեջ, ձգտում են կոլտնտեսություններ մտնել: Միջակ գյուղացի-մենատնտեսը մեղ մոտ ևս համոզված է, վոր հաստատուն ապագա ունենալու միակ յեկքը կոլտնտեսություններն է: Բայց չնայած դրան, վերջին շրջանում անբավարար է մեր կոլտնտեսությունների աճումը: Պատճառն այն է, վոր կուտակված կազմակերպությունները և կոլտնտեսությունները չեն կազմակերպում, չեն գլխավորում մենատնտեսությունները:

տեսներն հոսանքը դեպի կորսնտեսութիւն: Իրենք հարվածա-
յին կորսնտեսականներն ել առանձին ակտիվութիւն ցույց
չեն տալիս իրենց կորսնտեսութիւններն մեծացման ուղղու-
թյամբ: Այդ է պատճառը, վոր վերջին շրջանում, ամբողջ 5
ամսիս ընթացքում Հայաստանում կորսնտեսութիւն են մտել
ընդամենը 3323 տնտեսութիւն: Կան շրջաններ, վորոնք այս
վերջին ժամանակաշրջանում բոլորովին ընդունելութիւն չեն
ունեցել: Սա սխալ են, ընկերներ, պետք է հանել կորսնտեսութիւն
մտնելու արհեստական խոչընդոտները: Կորսնտեսութիւններն
ամբողջման, կորսնտեսութիւններն հաջողութիւններն հիման
վրա պետք է ակտիվ աշխատանք կատարել կորսնտեսութիւն
բերելու ազնիվ աշխատող մենատնտեսներին: Կորսնտեսութիւն
դռները չի կարելի արհեստականորեն փակել, ինչպէս այդ անում
են, որինակ՝ Յուզայի կոմունարները, Սարատովկայի, Ուոռտի
կորսնտեսութիւնը և այլն: Համզաչիմանի կորսնտեսութիւնը դի-
մում են տվել 50 տնտեսութիւն, բայց կորսնտեսութիւնը վոչ
մեկին չի ընդունել—անթույլատրելի սխալ է այս, ընկերներ:
Մեր համագումարը պետք է պարզ դնի այս խնդիրը: Մեր բոլոր
կորսնտեսութիւններն դռները բաց են ազնիվ ու աշխատող մե-
նատնտեսներն առաջ: (Ծ ա փ ե ի): Կորսնտեսութիւնը մուտք
չունեն կուլակն ու նրա ազնետը, անուղղելի ծուլն ու լողը:
Իսկ ինչքան շուտ ազնիվ աշխատող մենատնտես կորսնտեսու-
թիւն մտնի, այնքան լավ իր համար:

Այսպիսով ակտիվ աշխատանք կորսնտեսութիւններն հետա-
զա ամբողջման, հետազա աճման համար, կորսնտեսական աշխա-
տանքի արտադրողականութիւնը բարձրացնելու համար, կո-
տընտեսային բրիգադն ամրապնդելու համար—այսպէս է զբվում
խնդիրը: Առաջիկա ամիսներում բերքի մշակման և բերքահավա-
քի շրջանում մենք նոր առաջխաղացում պիտի կատարենք այս
խնդրի լուծման ուղղութիւնով:

ԶԱՒԶԱԻԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՁԸ

Ընկերներ, մեր հաղթանակները կորսնտաշինարարութիւն
ընագավառում, արդշունարհրութիւն գարդացման ընագավառում
արդշունք են համառ և կատարի պայքարի, վոր մղեցին և մղում
են բանվորները և կորսնտեսական գյուղացիները բայշեիկներն
կուսակցութիւն գեկավարութիւնով: Պայքարի միջոցով մենք

հաղթանակով ամարտեցինք առաջին հնգամյակը, իսկ այժմ ա-
ռաջ ենք մղում յերկրորդ հնգամյա պլանի իրագործումը, վորն
կենտրոնական խնդիրն է հատաատել մեր յերկրում անդասակարգ
սոցիալիստական հասարակարգ: Առաջին հնգամյակի կատարման
մարդերում մենք ջախջախեցինք կուլակներն դառակարգը: Կու-
լակութիւնը ջարդ ու փշուր է յեղել, բայց դեռ վերջնականա-
պէս վերացված չէ. նա ջանք է անում հարմարվել նոր պայման-
ներին—փոխել դիմակը, հաղար ու մի նոր ձևերով դիմադրել մեր
սոցիալիստական հաղթարշաւին: Իհարկե, կուլակի ուժը սոսկալի
չէ, բայց յեթե մենք քնենք, յեթե գգասա չլինենք, նա դեռ շատ
քնա կարող է հասցնել մեզ: Անա թե ինչու պետք է ել ավելի
բարձրացնել մեր կոլեկտիվ տնտեսութիւններն գասակարգային
գգաստութիւնը, պետք է անխնա լինել կուլակի, դաշնակի, ա-
մեն տիպի հակահեղափոխականներն նկատմամբ: Չխնայել թըր-
նամուն, չխղճալ նրան, վորովհետեւ յեթե մենք թուլամորթու-
թիւն անենք, խղճանք նրան, նա կփոքի մեր կորսնտեսութիւն-
ներն, մեր Խորհրդային իշխանութիւն հիմքը:

Ընկերներ, Խորհրդային Միութիւն մեր այս փոքրիկ անկյու-
նում՝ Հայաստանում մեր բանվորները և կորսնտեսային մասա-
ներն ամեն քայլափոխում գգում են, թե ինչ հսկա ուժով, ինչ
գորութիւնով խփում է պրոլետարական մեր յերկրի գարկերակը:
Անդուլ ու անդազար շարունակվում է մեր յերկրի տնտեսական-
կուլտուրական վերելքը, մեր յերկիրը ծածկվել է նոր գործարան-
ներն ցանցով, մենք ձեռնարկում ենք նոր, ավելի խոշոր շինա-
բարութիւններն:

Խորհրդային Միութիւն հսկա շինարարութիւնը պահանջում
է միջոցներ, խոշոր միջոցներ: Այդ միջոցներն միակ աղբյուրը
մեր յերկրն, Խորհրդային հսկա Միութիւն բանվորներն և աշխա-
տավորներն սոցիալիստական աշխատանքն է: Սոցիալիզմը կա-
ռուցվում է միայն և միմիայն միլիոններն, տասնյակ միլիոննե-
րն քրտնաջան աշխատանքով: Մեր մեծ նպատակի վերջնական
իրագործումն ապահովելու համար մեր յերկրի բանվորները և աշ-
խատավորները կանգ չեն առել և յերբեք կանգ չեն առնի դըժ-
վարութիւններն առաջ: Նրանք գիտակցաբար հաշտվում են ժա-
մանակաւոր գրկանքներն հետ՝ վաղվա լավ յերջանիկ որը ապա-
հովելու համար:

Ընկերներ, բայշեիկներն կուսակցութիւն, Ստալինի գեկա-
վարութիւն մեր յերկիրը կտրել ու անցել է հաղթանակի հսկա
մի ճանապարհ: Մեր յերկիրը ապրում է բուռն վերելքի, տնտե-
սական-կուլտուրական վերելքի պատմութիւն մեջ չտեսնված մի
շրջան, այն ժամանակ, յերբ կարմիր գծից դուրս կապիտալիս-

տական բոլոր յերկրներում, առանց բացառութեան, աշխատավորական մասսաները տառապում են ամենադաժան ճգնաժամից, վոր չի խնայում վնչ բանվորին, վնչ գյուղացուն, վոր դաժանութեն հարվածում է կապիտալիստական յերկրների գյուղատնտեսութեանը: Ժամանակ չկա մանրամասն նկարագրելու այն սոսկալի ծանր դրութեանը, վորի մեջ գտնվում են բանվորները և գյուղացիները կապիտալիստական յերկրներում: Ծանր է այդ յերկրների աշխատավորների ներկան, խավար և նրանց ապագան: Կապիտալիզմի պայմաններում նրանք յելք չունեն:

Ընկերներ, մենք ել ունենք դժվարութեաններ, սակայն նրանք բոլորովին այլ վորակ, այլ բնույթ ունեն, նրանք աճման, նոր կյանք, յերջանիկ կյանք ստեղծելու համար ծավալված հսկայական շինարարութեան դժվարութեաններն են: Յեվ վոր գլխավորն է՝ դժվարութեանների մեծ մասը մեր հետևումն է արդեն: Մենք հասել ենք այնպիսի մի բարձրութեան, վորի վրա պատմութեան ընթացքում չի յեղել և վնչ մի յերկիր, վնչ մի ժողովուրդ: Քիչ բան է մնում մինչև վերջնական հաղթանակի կատարը հասնելու համար: Լարենք ուրեմն մեր ուժերը, աշխատենք ինչպես վայել է բայլընկերին, հետ չմնանք Սորհրդային Միութեան աշխատավորական առաջավոր բանակներին: (Յ երկարատե ծափեր):

Ընկեր կոլտնտեսականներ, սովորեցեք հարվածային բանվորներից, թե ինչպես պետք է աշխատել ու պայքարել սոցիալիզմի կառուցման համար: (Ծ ա փ ե ր):

Ընկեր բանվորներ, ոգնեցեք հարվածային կոլտնտեսականներին դարձնել մեր յերկրի ամեն մի կոլտնտեսութեան սոցիալիզմի իրական ամրոց գյուղում: (Ծ ա փ ե ր):

Ավելի սերտ դարձնենք յեղբայրական դասակարգային կապը վրաստանի և Ադրբեջանի աշխատավորների հետ: (Ծ ա փ ե ր):

Ամբացնենք Անդրկովկասյան ֆեդերացիան, ամբացնենք խաղաղութեան միակ պաշտպան մեր բանվորագյուղացիական Կարմիր բանակը: (Բ ու ո ն ծ ա փ ե ր):

Բայլընկերներն ավարտենք մշակման գործը, բայլընկերներն կազմակերպենք բերքահավաքը, բայլընկերներն կատարենք մեր պարտավորութեանները պետութեան հանդեպ: Իրագործենք ստալինյան մեծ լոզունգը՝ բոլոր կոլտնտեսականներին ունեւոր դարձնելու մասին:

Կեցցե մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինը:

Նրա ղեկավարութեամբ միշտ բարձր բռնած լենինյան դրոշը, առաջ դեպի նոր հաղթանակներ: (Բ ու ո ն ու յ եր կ ար ա տ ե ծ ա փ ե ր, ո վ ա ց ի ա):



30. 301

1 12-127282

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.



Գ.Ս.Բ. ԵՆ ԼՆԴՐ
Ա, 1933 Գ.
ԱՌՏ № 165

Ա. ԽԱՆԴՋՅԱՆ

Իտոյի վոսեննոյ սեվա, Բոյվոյե զաԴաԿի
որգանիզաԿի յոբորկի և ուկրեպլենիա
կոլհոզոյե

ՓարտիզԴատ 1933 Երիվան